

1909



Unternehmer für

მეზღამაძის რძეა

614.88
U-19

614.88
U-19

Ամերիկայական
Դպրոցական շուք



614.88
-19

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մանքաշյան Մ. — Հայաստանի Կարմիր խաչի ջրան տարին	էջ 1
Բժ. Ծատուրյան Գ. — Այլևի խոսքերը հայրենասեր կանանց շարքերը	8
Առաքելյան Դ. — Կարմիր խաչը որպես մասնաշաղկապ-սրբապանական կազմակերպություն	10
Սար. Դ. — Մասնագիտական կազմերն ի սրբա սոցիալիստական հայրենիքին	13
Սարգսյան Գ. — Կազմակերպությունն այլևի ամբողջությունը Կարմիր խաչը	16
Բժ. Թովմասյան Ա. — Հիշողություններ Կարմիր խաչի աշխատանքներին	18
Տերսնեյան Մ. — Մասնաշաղկապ կազմերի պատրաստումն ու Կարմիր խաչը	19
Բժ. Ափրիկյան — Հիշողություններ Կարմիր խաչին	21
Բժ. Հարությունյան Գարրիկ — Կարմիր խաչի անցյալ գործունեություններ	24
Ղազարյան Սիրուշ — Նորանոր հաղթանակների համար	26
Ավետիսյան Հ. — Դեպի Արագած	27
Թադևոսյան Բ. — Կարմիր խաչի ուսումնական կոմբինատում	28
Անտոնյան Ա. — Այլևի բարձր կոչանքը Կարմիր խաչի փոխանցիկ դերը	29
Խաչատրյան Ա. — Սանպոստների աշխատանքների նմուշները	30
Ամիրբեգյան Նինա — Չորագյուղի սանպոստը — Կիրովականի շրջանի սրբանք	30
Վարդիկյան Ա. — Շահումյանի զպրոցի Կարմիր խաչի կազմակերպություն	31
Սարգսյան Երանյակ — Ջաջուռի Կարմիր խաչի սանպոստը	32
Սանդրուխյանների ռեպուբլիկական մրցման արդյունքները	32
Կոնսուլտացիան անկյուն	33



«ՏԱՆՁՎԱԾ ԵՎ ԲԱԶՄԱԶԱՐԶԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ, ՈՐՆ ԱՆՏԱՆՏԱՅԻ ՈՒ ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅԱՄԲ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԷՐ ՍՈՎԻ, ՔԱՅՔԱՅՄԱՆ, ԳԱՂԹԻ, ԲՈԼՈՐ «ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ» ԿՈՂՄԻՑ ԽԱԲՎԱԾ ԱՅՊ ՀԱՅԱՍՏԱՆԸ, ԻՐ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՏԱՎ ՆՐԱՆՈՎ, ՈՐ ԻՐԵՆ ՀԱՅՏԱՐԱՐԵՑ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԵՐԿԻՐ: ՄԻԱՅՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂՍՓԱՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԲԵՐԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»:

ՍՏԱԼԻՆ

2010

12.002

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԿԵՆՏԿՈՍԻ

Մ. ՄԱՆԹԱՇՅԱՆ
(Հայկական ՍՍՌ-ի Կարմիր Խաչի Կենտրոնի ճախագահ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՔՍԱՆ ՏԱՐԻՆ

Սրանից մի քանի օր առաջ Սովետական Միության աշխատավորությունը մեծ խանդավառությամբ տոնեց հաղթանակներով ու նվաճումներով լի Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիայի 23-րդ տարեդարձը:

1917 թ. հոկտեմբերին ուսական պրոլետարիատը, աշխատավոր դուռնացիության հետ միասին, Լեհիսի—Ստալինի փառապանծ պարտիայի ղեկավարությամբ բարձրացրեց ռևոլյուցիոն դրոշմ, տապալեց կապիտալիստներին ու կալվածատերերին իշխանությունը հաստատեց պրոլետարական դիկտատուրա:

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի այդ 23 տարիների ընթացքում ժողովրդական տնտեսության բոլոր ասպարեզներում ձեռք են բերվել աննկարագրելի նվաճումներ ու հաղթանակներ:

Նախկին ագրարային Ռուսաստանը ստալինյան հեղափոխությունից փոխեց իր դեմքը. բուլանդակ երկրում ամենուրեք, բարձրացան հազարավոր արդյունաբերական գիղանոներ ու ձեռնարկություններ: Երկիրը դուրս գալով նախկին ագրարային վիճակից, դարձավ հզոր, անպարտելի, ինդուստրիալ երկիր, վերածվեց սոցիալիզմի մի անառիկ ամրոցի:

Երբեմնի ամայացած ու խոպան դաշտերում հողագին հազարավոր տրակտորներ ու կոմբայներ, որոնք կյանք հաղորդեցին անցյալում կալվածատերերի կրունկների տակ հեծող միլիոնավոր փոխացած գյուղացիական տնտեսություններին:

Գյուղում վերջնականապես և անդառնալի կերպով հաղթանակեցին կոլտոգային կարգերը:

Սովետական երջանիկ երկրի պաշտոն երկնակամարի տակ, արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման բուռն վերելքին զուգընթաց, աճեց ու զարգացավ ձևով ազդային, բուլանդակությամբ սոցիալիստական արվեստն ու կուլտուրան:

Խոշոր են այդ բնագավառում ձեռք բերված նվաճումները. բավական է հիշատակել հազարավոր բարձրագույն ուսումնական հաստատությունները, տեխնիկումներն ու դպրոցների լայն ցանցը, որտեղ մեր երջանիկ երկրի միլիոնավոր պատանիներն ու երիտա-

սարդները մեծ խանդավառությամբ տիրապետում են գիտության անառիկ բարձունքները:

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ամենանշանակալից նվաճումներից մեկն է հանդիսանում Սովետական Միության ժողովուրդների անպարտելի բարեկամությունը: ՍՍՌ-Ի ժողովուրդները, Լեհիսի—Ստալինի վեհ դադախանների մարտական դրոշի տակ, ստեղծեցին մեր երկրում բազմաթիվ ազգությունների եղբայրական կուռ դաշինքը:

Անցած 23 տարվա հաղթական նվաճումները արդյունք են բուլանդակյան պարտիայի ամենօրյա համառ պայքարի, որն իր շուրջը համախմբելով ռևոլյուցիոն ուժերին և աշխատավորության լայն մասսաներին, տանում է մեզ դեպի կոմունիստական հասարակարգի վերջնական հաղթանակը:

Այժմ մենք հպարտությամբ կարող ենք ասել, որ անցած 23 տարիների ընթացքում, ոչ միայն պաշտպանեցին Հոկտեմբերի մեծ նվաճումները, այլև այդ կան կարճ ժամանակամիջոցում, Լեհիսի—Ստալինի պարտիայի ղեկավարությամբ, անհաշտ պայքար մղելով սոցիալիզմի վտերիմ թշնամիների—տրոցկիստական—բուխարինական ճիլադների, Փաշիստական լրտեսների, վնասարարների և այլ կոնտրեռոլացիոն թափափուկների դեմ, հիմնականում մեր երկրում ավարտեցին սոցիալիզմի կառուցումը, անցանք կոմունիստական հասարակարգի կառուցմանը:

Այս նույն պահին, երբ կապիտալիստական երկրները բռնված իմպերիալիստական նոր պատերազմով, իրար են հոշոտում, մեր երկիրը առաջ տանելով իր խաղաղասիրական քաղաքականությունը, չարունակում է աշխարհիս մեկ վեցերորդ մասում կոմունիզմի կառուցման բուռն վերելքը, երբեք չմոռանալով ժողովուրդների հանճարեղ առաջնորդ մեծ Ստալինի պատմական ցուցումը՝ կապիտալիստական շրջապատման և մեր երկիրը մոբիլիզացիոն վիճակի մեջ պահելու մասին:

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի շնորհիվ, ուսու



2396
41

62226 Ա. 2

մեծ ժողովրդի օգնութեամբ, ազատագրվեց իմպերիալիստների լակեյ, կոնտրոլուցիոն դաշնակիցների կողմից սովի ու դրկանքի մատնված, մերկ ու բոբիկ, բազմաչարչար հայ ժողովուրդը:

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի վրա ծածանվեց ազատութեան կարմիր դրոշմը:

Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր:

Բոլշևիկներն պարտիայի ղեկավարութեամբ սկսեցին քայքայված երկրի վերականգման աշխատանքները:

Անողորմ պայքար մղելով դաշնակցականների, մենչևիկների, էսերների, տրոցկիստների և նրանց թափափուկների դեմ, կառուցվեցին տասնյակ գործարաններ, ձեռնարկութուններ, դպրոցներ, բնակելի շենքեր և երբեմնի ավերակ Հայաստանը վերածվեց լեռ-գետտրիալ ագրարային երկրի:

Օրավուր զարգանում ու բարգավաճում է ձևով ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական հայկական արվեստն ու կուլտուրան:

Սովետական ողջ աշխատավորութունը, պարտիական և ոչ-պարտիական բոլշևիկները լծվեցին սոցիալիզմի կառուցման աշխատանքներին:

Բովանդակ երկրում եռում է սոցիալիստական մեծ աշխատանքը: Ժողովուրդն իր բոլոր ուժերը ի սպաս է դրել սոցիալիստական շինարարութեան մեծ գործին:

Շնորհիվ Լենինի—Ստալինի ազգային ճիշտ քաղաքականութեան, Հայաստանը տարեցտարի թե՛ արտաքին տեսքով, թե՛ աշխատանքների բովանդակութեամբ բոլոր ասպարեզներում դարձավ անձանաչելի:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու օրվանից անցել է երկու տասնյակ տարի:

Հայ ժողովուրդն իր այս մեծ սրտմական հոբելյանը դիմավորում է խոշոր նվաճումներով ու հաղթանակներով:

Այս 20 տարվա ընթացքում աճեցին բազմաթիվ պաշտպանական նոր կադրեր, որոնք համախմբված մեր մեծ պարտիայի շուրջը իրենց սերն ու նվիրվածութունն են ցույց տալիս դեպի սոցիալիզմի հայրենիքը, դեպի Լենինի—Ստալինի պարտիան, դեպի մեծ Ստալինը և պատրաստ են իրենց կյանքի գնով պաշտպանելու ձեռք բերված նվաճումները:

Հազարավոր աշխատավոր—աշխատավորուհիներ ընդգրկվելով այս կամ այն հասարակական կազմակերպութունների կողմից ստեղծված պաշտպանական խմբակներում, ալիքի խորացում են իրենց ռազմական գիտելիքները, տիրապետում են ռազմական տեխնիկային:

Այս ասպարեզում խոշոր աշխատանք է կատարել նաև Հայաստանի Կարմիր խաչի կազմակերպութունը:

Կարմիր խաչի կազմակերպութունը, որպես հասարակական, ռազմա-սանիտարական կազմակերպու-

թյուն, մեծ դեր է կատարել դաշնակցականներից ժառանգութուն ստացած քարուքանդ եղած երկրի վերականգնման, իսկ հետագայում սոցիալիզմի կառուցման գործում:

Հայկական Կարմիր խաչի քսան տարվա անցառվին լի է նվաճումների պերճախոս թվերով, ամսին կարելի է դրել հարուստ պատմութուն, բաժնի աշխատանքի կանգ առնել Կարմիր խաչի կատարած մի շարք հիմնական աշխատանքները:

Մենք սովետական իշխանութեան հաստատումը Հայաստանում Կարմիր խաչի ընկերութունը, իր միջանի ամսվա գոյութեան ընթացքում, ներկայացնում էր իրենից սոսկ ասպարեզակալի, բարեգործական մի ընկերութուն, կտրված մասսաներից, դուրի որևէ հեղինակութունից:

Մտուցերիստների կարճատև, բայց դաժան, դադաժ իշխանութունը տապալելուց հետո ամեն ինչ փոխվեց, երկիրն սկսեց ծաղկել ու զարգանալ:

Պրոլետարական դիկտատուրան իր ազդեցութունը տարածեց ամենուրեք, այդ թվում նաև Կարմիր խաչի վրա, որը վերածնվեց, դարձավ գործունի իսկ հատկապես վերջին տարիների ընթացքում՝ մարտունակ, ուժեղ պաշտպանական մի կազմակերպութուն:

Կարմիր խաչի դերը մեծ է և՛ խաղաղ պայմաններում, և՛ պատերազմի ժամանակ. իր քսան տարվա գոյութեան և առանձնապես վերջին 2—3 տարիների ընթացքում քիչ աշխատանք չի կատարել նա:

Հայ ժողովրդի թշնամիների մերկացվելուց հետո, որոնք սողոսկել էին մեր ղեկավար այս կամ այն պոստը, գործի գլուխ անցան կոմիսիան, երիտասարդ, սովետական կարգերում աճեցված կադրեր:

Բազմակողմանի են Կարմիր խաչի կատարած աշխատանքները, նա մեծ օգնութուն է ցույց տվել առողջապահական օրգաններին—պայքարել է վարակիչ և սոցիալական ռիսկերի դեմ, բուժել է հարյուրավոր հիվանդներ, դադարել է աշխատավորների աշխատանքի և կենցաղի պայմանների լավացման գործով, օգնել է տարերային աղետներից տուժած քաղաքացիներին, արտասահմանից գաղթած բազմաթիվ սովյալների փրկել է մահվան ճրագներից:

Կարմիր խաչը մեր պանծալի Բանվորագյուղացիական Կարմիր Բանակի հետ մասնակցել է նրա կողմից կազմակերպված տակտիկական վարժութուններին, գործնականում ցույց տալով իր սերը, նվիրվածութունը, պատրաստակամութունն ու մարտունակութունը սոցիալիստական հայրենիքի պաշտպանութեան գործում:

Կազմակերպութունն իր առաջ դրված խնդիրները կենսագործելու համար ձեռնարկել է տարբեր միջոցառումներ, նայած ժամանակին և պահանջին:

1920 թվից մինչև 1924 թ. ապրիլ ամիսը Կարմիր խաչը փաստորեն ապրում էր սաղմային վիճակում:

Նրա աշխատանքները կրում էին գույտ բարեգործական բնույթ: Կազմակերպութունը համարյա կասկած չէր աշխատավորական մասսաների հետ:

1924 թվից կազմակերպութունը դուրս գալով իր սահմանից՝ վիճակից՝ ձեռնարկում է կոնկրետ աշխատանքներ: Լենինականում, էջմիածնում, Նոր-Բայաթում, Մեղրիում, Սև քարում, Զանգեզուրում, Դի-Փամբակում, Քեչիզքենդում և Ստեփանավանում ստեղծվում են Կարմիր խաչի մասնաճյուղեր, որոնք ընդգրկում են իրենց մեջ 1184 անդամ:

Պայքարը մալարիայի, ինչպես նաև այլ տրոպիկական հիվանդութունների դեմ, որոնք դարերից իվեր բուն էին դրել Հայաստանում, քայքայել էին ժողովրդի առողջութունը և մի աղետ էին հայ ժողովրդի համար, դարձավ կազմակերպության ուշագրավ խնդիր:

Այդ նպատակով 1924 թ. սկզբներին բացվեց էջմիածնի տրոպիկայան: Տրոպիկայանի անմիջական ղեկավարութեամբ Սամաղարի և Զանգեզուրի շրջաններում գործում էր 2 բժշկական խմբակ, որոնք սպասարկեցին 30 հազարից ավելի ազգաբնակչության: Տրոպիկայանի շրջիկ խմբերը աշխատել են նաև Զեյլայի, խաթունարի, Ղարխունի, Սարվան-լարի, Ղարաղլաղի, Փարաքարի շրջաններում, հետագայում Թուրքմենիում և Նվերկիայում:

Մալարիայով վտանգված էր նաև Մեղրին, որը հանդիսանում էր մեր ռեսպուբլիկայի ամենահեռավոր և խուլ ծայրամասերից մեկը: Կարմիր խաչը տրոպիկայան է բաց անում նաև Մեղրիում, որն սպասարկում է 24 դուռ, որից 14-ը դաշտային, իսկ 10-ը՝ լեռնային: Շրջանում գործում էին նաև 2 շրջիկ խմբակ՝ Լեհվազում և Շվանի ձորում:

Մալարիայի տեսակետից, հիշյալ շրջաններից հետո, ամենավտանգված վայրն էր համարվում Դարա-լաղյազի դաշտի Արփա գյուղը, որի բնակիչների 86%-ը վարակված էր մալարիայով. Կոտայքի Քանաքեռ գյուղի բուժկայանը փոխադրվեց Արփա և վերածվեց տրոպիկայանի:

Այդ 3 տրոպիկայանների հիվանդների հաճախումների թիվը, ըստ տարիների՝

1924 թ.	48709	հիվանդ
1925 թ.	71802	»
1926 թ.	74020	»
1927 թ.	45565	»

Բացի բուժական գործից, տրոպիկայանները (մասնավորապես էջմիածնի տրոպիկայանը) զարգանում, մանկական համայնքներում, ձեռնարկութուններում և բնակելի վայրերում կատարում էին գիտահետազոտական և պրոֆիլակտիկ խոշոր աշխատանք, կիրառելով զանազան միջոցառումներ վարակված այդ վայրերն առողջացնելու համար: Օրինակ, տրոպիկայանները դարձան հսկում էին ռոտովիրուսների միջոցով չորացնել էին տալիս ճահճառները,

հիվանդութունը կանխելու նպատակով, ազգաբնակչությանը ենթարկում էին խիճխիզացիայի, կազմակերպում էին բազմաթիվ գրույցներ ու հանրամատչելի դասախոսութուններ, որոնց ներկա էին լինում հազարավոր դուռացիներ:

Կարմիր խաչը չի սահմանափակվում դրանով. նա պայքար է ծավալում սոցիալական այնպիսի անտերի դեմ, ինչպիսիք են սիֆիլիսն ու տրախոման:

1925 թվին Նոր-Բայազետում կազմակերպվում է ակնարուժական բրիգադ, որը հետագայում փոխադրվում է Բասարզեշար, ապա Ներսիսի: 1927 թվին այդ բրիգադաների թիվը հասցվեց երկուսի:

Կարմիր խաչը լուրջ ուշադրութուն է դարձնում սիֆիլիսի դեմ պայքարելու վրա, որի համար 1926 թվին Մեծ Պարսիում, ապա նաև Աղբարայում, կազմակերպվում է վեն. դիսպանսեր: Շնորհիվ ձեռք առած կտրուկ միջոցառումների Կարմիր խաչին հաջողվում է շրջանից արմատախիլ անել սիֆիլիսը:

1924—27 թվականների ընթացքում շրջաններում Կարմիր խաչի գծով կազմակերպված բժշկականներում հիվանդների հաճախումների թիվը հասնում է 243.742-ի:

1927 թվին բացվում է ևս մի ֆելդշերական կայան, որն սպասարկում է 26.692 հիվանդի:

Իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների հետևանքով Սովետական Հայաստանը ժառանգութուն ստացավ տասնյակ—հազարավոր անապատառներ երեխաներ: Կարմիր խաչը նրանց մի մասի խնամքը վերցրեց իր վրա. 8—14 տարեկան հասակ ունեցող որբերի համար 1925 թ. մայիսին կազմակերպեց մանկատուն, որի համար գնվեց հատուկ շենք, հարմարեցնելով դրան կից մի լայն հրապարակ և մարզադահլիճ՝ բանվարանոցի և այլ զբաղմունքների համար: Սաների մեջ տարվում էր դաստիարակչական խոշոր աշխատանք, լայն տեղ տալով ֆիզիկուլտուրային:

Մանուկների համար կազմակերպվում է ակումբ, որտեղ կենտրոնացվում են նրանց բոլոր տեսակի զբաղմունքները՝ դասեր, խաղեր, հավաքույթներ, գրույցներ և այլն: Մանկատան սաների մեծ մասը ընդգրկվում է պիոներական կազմակերպության մեջ, որոնք իրենց ձեռքն են վերցնում ակումբային աշխատանքների մեծ մասը՝ պատի լրագրի հրատարակումը, երեկույթների և էքսկուրսիաների կազմակերպումը, հետագայում նաև Փաղկածորի բազերային աշխատանքները: Քիչ չէ այդ մանկատանից դուրս եկած շնորհալի նկարիչների, երաժիշտների և մասնագետների թիվը:

Կարմիր խաչի խնդիրներից մեկն էլ բնական աղետներից տուժած ազգաբնակչության օգնութուն ցույց տալու խնդիրն է: Խոշոր աշխատանք է կատարվել նաև այդ ուղղությամբ:

1926 թ. հոկտեմբերի 22-ին, Լենինականում տեղի ունեցած երկրաշարժի լուրն ստանալուն պես, Հայաստանի Կարմիր խաչը անմիջապես ուղարկում է

բժշկական խումբ՝ բժշկութեան և անհրէի գործը կազմակերպելու համար:

Աղետայիններն օգնելու գործում, մասնավորապէս զգրեանկան շրջանում, Հայաստանի Կարմիր խաչին խոշոր օգնութիւնը ցույց տալին եղբայրական ուսուցումը կանանցից Վրաստանի Կարմիր խաչի և Ադրբեյջանի Կարմիր Մահիկի կազմակերպութիւնները:

Հոկտեմբերի 25-ին Թուրք Դարաքերիսա գյուղում կազմակերպւում է բժշկական, որն սպասարկում է նաև Արալի, Ալեքսանդրովկայի, Բայանդուրի և Դահարլիի տուժածներին: Այս վայրերում ցույց է տրւում բուժօգնութիւն 3875 վերաւորներին:

Օգնութիւն է ցույց տրւել նաև Հունաստանից և Պոլսից ներգաղթողներին, բացելով Դաւալու գյուղում 15 մահճակալով հիվանդանոց և բժշկական կայան:

Կարմիր խաչի կազմակերպութեան առաջ գրւած խնդիրները կենսագործելու համար անհրաժեշտ էր վերացնել լայն մասսաների սանիտարական անգրագիտութիւնը. այս նպատակով 1927 թ. աշնանից սկսվեց առաջին օգնութեան խմբակների կազմակերպումը, ներգրավելով այդ աշխատանքներում նաև Առողջկամատի գծով աշխատող բժիշկներին: Սկզբնական շրջանում Հայաստանում գործում էին 18 առաջին օգնութեան խմբակներ՝ 510 ունեկներներով, որոնցից ավարտեցին 334 հոգի:

Հայաստանի Կարմիր խաչը շարունակում է իր գործունեութիւնը համարյա նույն ուղղութեամբ և 1928—1930 թվականներին ընթացքում, այն տարբերութեամբ միայն, որ ավելանում են ևս նոր 10 մասնաճյուղեր՝ Նալբանդում, Սարգսաբաում, Արաղբայանում, Ալալբերդում, Արիայում, Սիսիանում, Դիլիջանում, Իջևանում, Դամարում, Սևանում, հասցնելով մասնաճյուղերի թիւը 19-ի:

Իր գործունեութիւնն ավելի մասսայականացնելու համար Կարմիր խաչը աշխատում է նորանոր անդամներ ընդգրկել ընկերութեան շարքերը:

Երևանում, աչքի ընկնող հիմնարկներին և կուկերտիվներին կից կազմակերպւում է 56 բլիթ, իսկ չրվկներտրոններում՝ 62 բլիթ. անդամների թիւը հասնում է 24000-ի: Այդ ժամանակամիջոցում պակասում է մարտիրոսով տառապող հիվանդների հաճախումները թիւը, 1925 թվին 71802 հաճախած հիվանդներից, ծավալած պայքարի շնորհիվ, 1930 թվին իջնում է 42.236-ի: Նույնը տեղի է ունենում վերականգնողական հիվանդութիւններին—սիֆիլիսի գծով:

Մասնիկ կերպով պահանջում է տրախտմա հիվանդութիւնը. եթե 1926 թվին տրախտմայով հիվանդները հաճախում էր 11.993-ի, ապա 1930 թվին այդ թիւը իջնում է 518-ի. սա հսկայական նվաճում է, որը նոր-Բայազետի, Բասարզեզարի, Սեւանի շրջաններ Կարմիր խաչի կազմակերպութիւններ:

Իր աւճան և ամբարայնում գործում լեռնոր դեր խաղաց:

1928 թվին բացվեց 3 հիվանդանոց՝ Սիսիանում, Սև-քարում և Ելենովկայում, իսկ Արաղբայանի, Տեղ գյուղի և Արիայի բուժկայանները հանձնվեցին շրջադատիներին:

Պիոներների մեջ շարունակվեց նույն աշխատանքը, ինչ որ կատարւում էր նախորդ տարիներում. ինչ վերաբերում է մանկատանը, ապա Կարմիր խաչը մեծահասակներին տեղափոխեց աշխատանքի զանազան գործարաններում, հիմնականում տեքստիլ գործարանում, իսկ փոքրահասակներին հանձնեց Լուստովկոմատի մանկատունը:

Հայաստանի Կարմիր խաչը մեծ օգնութիւն է ցույց տալիս Դրիմի երկրաշարժի աղետայիններին, Քուլթայի հրկիզայիններին:

Կարմիր խաչը խոշոր պայքար է ծավալել նաև ջութեղի դեմ. նա բժշկական խմբեր է ուղարկել Նոր-Բայազետ և Զանգեզուր, մատակարարելով նրանց անհրաժեշտ պիտույքներ ու դեղորայք:

Անցած տարիներին համեմատութեամբ առաջին օգնութեան խմբակների կազմակերպումը ավելի մեծ ծախս է ստանում. այդ տարիների ընթացքում կազմակերպվել է մոտ 118 խմբակ:

Այստեղ կազմակերպւում է անդակայան՝ շարժական խոհանոցով. մյուս անդակայանը կազմակերպւում է Դաւիթաշխար գյուղում: Մանդակայաններից օրական բաց է թողնւում 6000 մսով ճաշ. մեկ ամսվա ընթացքում բաց թողնվեց 148.451 ճաշ:

Դրանից հետո, երբ աղբաբնակութիւնը տեղափոխվեց գետնափոր տներում, աշխատանքի վայրը տեղափոխվեց Լենինական, որտեղ կազմակերպվեց մի անդակայան 3000 հոգու և մի կաթի խոհանոց 500 ծծկեր երեխաների համար, որտեղից բաց է թողնւած 295.303 ճաշ և 66.922 բաժին կաթ. հունվարի վերջին բացվեց երկու թեյարանը, որտեղից բաց թողնվեց 29.643 բաժակ քաղցր թեյ: 1927 թ. մայիսի մեկին սնունդակայաններն ու կաթի խոհանոցը փակվելուց հետո, բացվում է կոնսուլտացիա ծծկեր երեխաների համար, որը գործում է մինչև 1927 թվի հոկտեմբերը և ցույց է տալիս զգալի օգնութիւն:

Կարմիր խաչը քիչ աշխատանք է կատարել նաև 1927 թ. օգոստոսի 18-ին Դիլիջանում տեղի ունեցած հեղեղից վնասված բնակչութեանը օգնութիւն ցույց տալու գործում, բաժանելով նրանց վերմակներ, պատրաստի չորեր, կոշիկներ, սպիտակեղեն և այլն:

Հայաստանի Կարմիր խաչն օգնութիւն է ցույց տալիս նաև Սովետական Միութեան ռեսպուբլիկաների Կարմիր խաչի կազմակերպութիւններին, ինչպես, օրինակ, Ադրբեյջանի, Վրաստանի, Ուզբեկստանի, Բելոռուսիայի, Դրիմի բնական աղետներից տուժածներին:

Առաջին օգնութեան խմբակները լավագույն կերպով ավարտողներից կազմակերպվել է 2 սանիտարական դրուժինա, մեկը Լենինականում, մյուսը Երեւանում, որոնք 12 օրով մասնակցեցին Կովկասյան կարմրագործ բանակի զորախաղերին:

Հայաստանի Կարմիր խաչը մասնակցել է նաև Շվեյցարիայի քաղաքներում Համամիութենական կուլտուրական կապի ընկերութեան կողմից 1929 թվին կազմակերպված ցուցահանդեսին՝ ուղարկելով այնտեղ հարուստ նյութեր, որտեղ ունեցավ մեծ հաջողութիւն:

1930 թվականին մասնակցեց Դրեզդենի առողջապահութեան միջազգային ցուցահանդեսին:

1928 թ. դեկտեմբերին հրավիրվեց Կարմիր խաչի ընկերութեան առաջին համագումարը, որին մասնակցում էին 91 պատգամավոր, լավեցին գործկոմի և Հայաստանի Կարմիր խաչի վարչութեան հաշվետւութիւնները, ինչպես նաև փոփոխութեան ենթարկվեցին կանոնադրութեան միջանի կետերը:

Ահա այն հիմնական աշխատանքները, որոնք կատարվել են 1928—1930 թ. թ. ժամանակաշրջանում:

Սկսած 1931 թվից Կարմիր խաչի աշխատանքների բնույթը փոխվում է: Ուժեղանում են կազմակերպական և մասամբ ագիտացիոն աշխատանքները:

Բոլոր շրջանների բուժական կետերը (բացառութեամբ Երևան և Լենինական քաղաքների) հանձնվում են առողջապահական օրգաններին, դրանց փոխարեն բացվում է առողջապահական հիմնարկների նոր ցանց՝ վճարովի պոլիկլինիկա, առամնարուժարան, առամնապրոտեզարան, արորտարիում և այլն, որոնք մինչ այդ գոյութիւն չուներին: Այս հիմնարկութիւնները հաճախել են տասնյակ-հազարավոր հիվանդներ, որոնք ստացել են որակյալ մասնագիտական բուժում:

1931 թվականից ուժեղ կերպով սկսվում է մասնագիտական կադրերի՝ բուժքույրերի, սանհսկիչների, դեղինֆեկտորների, սանհրահանգիչների և սանիտարների պատրաստումը:

1933 թվին ռեսպուբլիկայում կազմակերպւում է Կարմիր խաչի 26 անկյուն, որը խոշոր ագիտացիոն նշանակութիւն ունեցավ:

1931—33 թ. թ. ընթացքում առաջին օգնութեան խմբակներն ավարտել են մոտ 9000 հոգի. ընկերութեան շարքերում ընդգրկված անդամների թիւը հասնում էր 25.120 հոգու: Սանիտարական դրուժինաների քանակը զգալի չափով աճել է իհաշիվ արտադրական

ձեռնարկութիւններում կազմակերպված դրուժինաների: Դրուժինաները սիստեմատիկ ունենում են ծրագրային պարապմունքներ և տակտիկական վարժութիւններ:

Կարմիր խաչի աշխատանքների բովանդակութիւնը հետադարձ թուրքովին փոխվում է. կազմակերպական աշխատանքների կողքին, տարբեր մասնագիտութեան կադրեր պատրաստելու հետ միասին, սկսվում է Կարմիր խաչի տնտեսական գործունեութեան շրջանը, որպես ռազմա-սանիտարական աշխատանքների ուժեղացման բաղա. այդ տնտեսական որակները կրում են զուտ սանիտարական-առողջապահական նշանակութիւն:

1934 թվից առաջ են դալիս ռազմական նշանակութիւն ունեցող սանիտարական ձեւալորումներ՝ կազմակերպվում են սանիտարական պոստեր արտադրական ձեռնարկութիւններում, բնակավայրակոտորում, որոնք զգալի աշխատանք են տանում աշխատանքի վայրը առողջացնելու, շուտափութ օգնութիւն ցույց տալու գործում: Դրվում է լայն մասսաների սանիտարական անդագիտութիւնը վերացնելու հարցը, որի համար սահմանվում են «Պատրաստ սանիտարական պաշտպանութեան»՝ ՊՍՊ-ի առաջին աստիճանի նորմաներ: 1938 թվին մտցվում են «ՊՍՊ»-ի 2-րդ աստիճանի և «ՆՊՍՊ»-ի նորմաներ:

Մինչև 1936 թիւը այդ սանպոստերը կրում էին ձեւական բնույթ: Կարմիր խաչի 1936 թվին կայացած 3-րդ համագումարի կոնկրետ առաջադրանքներից հետո զգալի չափով աճում է Կարմիր խաչի սկզբնական կազմակերպութիւնների քանակը և օրըստօրը ավելանում է անդամների թիւը:

Աշխատավորների մեջ վճռական թեկում ստեղծվեց 1937 թվերի վերջերից, երբ մերկացվեցին Ժողովրդի թշնամիները և ղեկավարման անցան նոր կադրեր, որոնք կոնկրետ կերպով օգնեցին բոլոր կազմակերպութիւններին կարճ ժամանակում խաղաղ վերացնելու վնասարարութեան հետքերը և նոր թափ, նոր ոգևորութիւն հաղորդեցին մեր բոլոր աշխատանքներին նոր բարձունքներ տիրապետելու համար:

Զգալի շրջադարձ տեղի ունեցավ նաև հասարակական կազմակերպութիւնների, այդ թիւում և Կարմիր խաչի կազմակերպութեան ղեկավարման գործում: Ներքոհիշյալ թվական տվյալները պերճախոս են և համոզեցուցիչ ոչ միայն քանակով, այլև իրենց բովանդակութեամբ:

	1920 թ. մինչև 1930 թ.	1931 թ. մինչև 1936 թ.	1937 թ.	1938 թ.	1939 թ.	1940 թ.
Սկզբնական կազմակերպութիւնների քանակը	429	565	885	1000	1563	1721
Կարմիր խաչի անդամների թիւը	24000	36631	44608	53586	85165	94451
«ՊՍՊ»-ի նորմաները	—	7609	4164	7891	22671	28466
հանձնել են	—	—	—	—	—	—
«ՆՊՍՊ»-ի նորմաները	—	1320	693	4778	9276	9969
հանձնել են	—	—	—	—	—	—

Համաժողովներն 1938 թվի դեկտեմբերի 3-ի Կարմիր խաչի կազմակերպության մասին ունեցած որոշման հիման վրա վերակառուցվեց Կարմիր խաչի աշխատանքները ողջ սիստեմով. իր ունեցած բոլոր տնտեսական և բուժական ձեռնարկ-հիմնարկները հանձնեց Համապատասխան մարմիններին և իր վրա վերցրեց սկզբնական կազմակերպութունների, սանպոստների, Կարմիր խաչի ստեղծման, բուժ. մասնագիտական կազմակերպությունների և քաղաքացիական արդարանկալության մեջ ազդեցություն մասնաշաղկապի աշխատանքների ծավալման լուրջ և արտասահմանադուր զործը:

Երկրի պաշտպանական աշխատանքներն առանձնապես լավացան պարտիական 18-րդ համազումարի որոշումից հետո, երբ պարտիական օրգաններին կից ստեղծվեցին ռազմական բաժիններ:

Եթե 1936 թ. կար 633 կազմակերպություն, ապա 1940 թ. ստեղծվում են 1721 սկզբնական կազմակերպություններ, որոնց անդամների թիվը 34.421-ից հասնում է 94.451 հոգու:

Սանպոստները նույն ժամանակահատվածում աճել են 724-ով: ՊՍՊ-ի և ԵՊՍՊ-ի նորմաները հանձնել են 83051 մարդ:

Վերջին 3 տարվա ընթացքում Կ. խաչի կազմակերպության նվաճումները մեծ են թե՛ կազմակերպական, թե՛ ազդեցության, թե՛ մասնաշաղկապ-մասնագիտական ու ղեկավար կազմակերպության պատրաստման և թե՛ սանձնավարումների ուղղությամբ:

Նոր ստեղծված սկզբնական կազմակերպությունները թիվը հասել է 721-ի: Նրանց աշխատանքը դարձել է բովանդակալից. Կարմիր խաչի ժողովները տեղի են ունենում սիստեմատիկաբար. այդ ժողովներում քննարկում են շատ կարևոր խնդիրներ, օրինակ՝ սանիտարական պաշտպանական պլանները, առողջացման աշխատանքները և այլն:

Կազմակերպություններն ունեն սոցմրցման պայմանագրեր, կազմակերպում են սանարկալներ, բեկ-ցիաներ: Կարելի է հիշատակել բազմաթիվ այդպիսի կազմակերպություններ Լենինականից (տեքստիլի, կոշիկի, միսկոմբինատի), Երևանից՝ «Արարատ» արեստի, սննդառի, մանվածքային արտելի, և Շա-հումյանի, Կրուպսկայայի, Արովյանի դպրոցների կազմակերպությունները:

Կոլխոզային կազմակերպություններից հիշատակման արժանի են՝ Ձաջուռ և Մոլոմոսա գյուղերի (Գուգրենի շրջան), Մեղրիի՝ Կոնսերվի գործարանի, 2-րդ սովխոզի (Վեդի) և այլ կազմակերպությունները:

Ողորդ աշխատանք է տարված ազդեցության ուղղությամբ: Ձի եղել ոչ մի քաղաքական ու տնտեսական աշխատանք, որտեղ Կարմիր խաչը հանդես չէր խաղում աշխատանքներով: Տասնյակ անդամներ կազմակերպվել են ակտիվի չիստեր:

Հայաստանի Գերագույն Սովետի ընտրությունները

րի ժամանակ առանձնացվել են 125 ազխատորներ: Մեր աշխատանքի առաջավորներից այս տարի Համա-միութենական դյուղատնտեսական ցուցահանդեսին արժանացել են 6 ակտիվիստներ, որոնք արդեն գնացել և վերադարձել են:

Դրուժինաների և սանպոստների անդամներից դեպի հեռավոր վայրերը՝ Երևան-Բաղու, Լենինական-Ալաբաղ-Երևան, Երևան-Ախտա-Ալան կազմակերպվել են հետիոտն արշավներ:

Հայաստանի սովետական իշխանության 20-ամյա-կի կապակցությամբ կազմակերպվում է դրուժինաների աստղաձև արշավ դեպի այն վայրերը, որտեղ ապաստարած ժողովուրդը առաջին անգամ սովետական դրոշ է բարձրացրել: Դրուժինաները դուրս են գալու տարբեր ուղղություններով՝ Լենինականից, Դիլիջանից, Կիրովականից, Ղաթաբլից, Երևանից և միանալու են Ախտայում, ու միասին տարեդարձի օրը վերադառնալու են Երևան և մասնակցելու են շքերթին:

Ունենք «ՊՍՊ»-ի պատրաստված տասնյակ-հազարավոր նշանակիչներ, որոնք պատրաստ են մեր մարտիկներին ժամանակին տալու առաջին շտապ օգնությունը, մինչև բժշկական օգնություն հասնելը:

Այս վերջին տարիների ընթացքում Երևանի, Լենինականի Կարմիր խաչի ուսումնական կոմբինատները, որոնք ապահովված են լաբորատորիաներով և ունեն լայն հնարավորություններ, պատրաստել ու պատրաստում են բարձր որակի բժշկական թուղթեր, սանհրահանգիչներ, դեզինֆեկտոններ և պաշտպանական այլ կազմակերպություններ:

Ողորդ ուղղություն է դարձվել ղեկավար կազմակերպության պատրաստման վրա. չունենք ոչ մի շրջանային կոմիտեի նախագահ, որը անցած չլինի Կարմիր խաչի հատուկ դասընթացները կա՛մ Մոսկվայում, կա՛մ մեզ մոտ. ավելի ևս մեծ քանակությամբ պատրաստվել են սկզբնական կազմակերպության նախագահներ: Հիշատակման արժանի են սանպոստների և սանդրուժինաների կառավարման աշխատանքները: Լենինականի բնակավայրակոոպի սանպոստը 1940 թ. 6 ամսվա ընթացքում 23 մարդու ցույց է տվել առաջին օգնություն (զանգի կոտրվածք, արմուկի ջարդվածք), օգնել է նաև տեղական Կարմիր խաչի կազմակերպություններին, անց է կացրել իր թաղամասում սանարկալ:

Գիշ գործ չեն կատարել Երևանի Սպանդարյան ռայոնի 2 բուժօգնության, Կիրովյան, Մոլոտովյան ռայոնների, Ինչպես նաև կոլխոզների, սովխոզների, ՄՏԿ-ների սանպոստները: Կարելի է դեռ էլի շատ օրինակներ բերել այդ սանձնավորումների կոնկրետ աշխատանքից, սակայն բավականանա՛նք այս-բանով:

Մասնաշաղկապի ուսուցման գծով նույնպես խոշոր աշխատանք է կատարվել:

Այս է համառոտ կերպով Հայաստանի Կարմիր

խաչի 20 տարվա անցած ուղին: Մրանք են կազմակերպության նվաճումները, հանպաշտպանության ռազարկում:

Այս նվաճումները ձեռք բերելու գործում խոշոր դեր է խաղացել մեր սիստեմում աճած սքանչելի ակտիվը, որի թիվը հասնում է հարյուրների. այդ թվում կարելի է նշել լավագույն աշխատող հին կազմակերպիչներ, բժիշկներ Թովմասյանին, Հարություն-յանին, Սողոմոնյանին, Ֆենյա Մատուրյանին, Ասյա Եսայանին, Լուսյա Հովհաննիսյանին և շատ ուրիշներին:

Ակտիվի վրա հենվելով՝ կազմակերպությունը դեռ խոշոր աշխատանքներ ունի կատարելու մեր պլանների որակական ցուցանիշները ապահովելու և կազմակեր-

պությունն առաջադրված խնդիրները կենսագործելու ուղղությամբ:

Հայաստանի Կարմիր խաչն այս բոլոր նվաճումներն ու հաղթանակները ձեռք է բերել Լենինի՝ Ստալինի անպարտելի պարտիայի ղեկավարությամբ, Ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինի ցուցումների կենսագործմամբ:

Կազմակերպությունը հավաստիացնում է կառավարությանն ու պարտիային, որ նա կամրապնդի ձեռք բերած նվաճումները և է՛լ ավելի մեծ եռանդով կլծվի մեր հայրենիքին նորանոր պաշտպանական կազմակերպության ստեղծման, կազմակերպության, որոնք պատրաստ են իրենց արյան գնով, հերոսական կարմիր Բանակի հետ, միասին պաշտպանելու մեր սփյառվածական հայրենիքի սրբազան սահմանները:

ԿԱԴՐԵՐՆ ԵՆ ՈՐՈՇՈՒՄ ԱՄԵՆ ԻՆՁ: ՍԱ ԱՆՎԻՃԵԼԻ Է: ՀԵՆՅ ԱՅՍ ՊԱՏՃԱՌՈՎ ԷԼ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԵՆՏԿՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՆՔԱՆ ՇԱՍ ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԷՆ ՀԱՏԿԱՅՆՈՒՄ ԵՎ ՀԱՏԿԱՅՆՈՒՄ ԵՆ ՍԵՓԱԿԱՆ, ԻՍԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՊԱՐՏԻԱԿԱՆ ՃԱՆԱՁՈՐ ԵՎ ԻՐԵՆՅ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՈՒ ԼԵՆԻՆԻՍՊԱՆԻՄԵԹ ԳՈՐԾԻՆ ԱՆՍԱՀԱՄԱՆՈՐԵՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՐԴԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ: ՇԱՍ ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՏԿԱՅՆՎՈՒՄ ՄԵՐ ԿԱԴՐԵՐԻ ԱՃՄԱՆՆ ՈՒ ԿԱՍԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆԸ ԲԱՆԱԲԱԿԱՆ ԵՎ ՀԱՏԿԱՊԵՍ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ: ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ԲԱՎԱՐԱՐ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԵ ԵՎ ՊԱՀԱՆՁՎՈՐ ՈՐԱԿԻ ԿԱԴՐԵՐ: ՆՐԱՆՔ ԱՆԴՆՔՀԱՍ ԱՃՈՒՄ ԵՆ ԲՈՂՈՐ ՏԵՍԱԿԵՆՆԵՐԻՑ ՄԵՐ ՄԵԾ ԵՐԿՐԻ ՈՒ ԲԱՆԱԿԻ ԱՃՄԱՆ ՀԵՍ ՄԻԱՄԻՆ: ՀԵՆՅ ԱՅԳՊԻՍԻ ՄԱՐԴԻԿ, ԱՅԳՊԻՍԻ ԿԱԴՐԵՐՆ ԵՆ ՄԵՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ԳԱՐՁՆՈՒՄ ԱՌԱՋԱԿԱՐԳ, ԱՆՈՐՏԱԿԵԼԻ ԸՍՏ ԻՐ ՈՒԺԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՍՊԱՌԱՋԻՆՄԱՆ, ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԱԿՆ ԸՍՏ ՈԳՈՒ ՈՒԺԻ, ԸՍՏ ԲԱՆԱԿԱԿԱՆ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅԱՆ:

ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ԱՅՆՊԻՍԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՆՁՊԵՍ ԿԱՐՄԻՐ ԽԱՅԻ ԵՎ ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԴՐԱՆՔ, ԴԺԲԱՏԱՐԱՐ, ԴԺԺ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՎԱՅԵԼՈՒՄ: ԴՐԱ ՀԵՍ ՄԻԱՄԻՆ, ՆՐԱՆՅ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎԱՍ ԶԻ ԵՂԵԼ ԵՎ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԿԱՐԵՎՈՐ ՈՒ ԼԱՎ, ԵԹԵ ՊԱՐՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԵՐՈՒՄ ԹԵԿՈՒՋ ԵՐԲԵՄՆ ՄԻ ՓՈԳՐ ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՅՆՆ ՆՐԱՆՅ:

ՄԵՆՔ ԶԵՆՔ ԿԱՐՈՂ, ԻՐԱՎՈՒՆՔ ԶՈՒՆԵՆՔ ՀԵՍ ՄՆԱԼՈՒ ՄԵՐ ԲԱՆԱԿՆԵՐԸ, ՖԱՐԻԿԱՆԵՐԸ, ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՆ ՈՒ ԿՈԼԵՈՂՆԵՐԸ, ԺՈՂՈՎՐԴԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՀԱՐԱՎՈՐ ՀԱՐԱՎԱԿՈՒՄՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԵՐ ԲԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ:

(Գաղվածքներ ՀամԿ(Բ) պարտիայի 18-րդ համագումարում ընկ. Վորոշիլովի արտասանած խոսքից)

Համամիութենական Ժողովումսովետի 1938 թվի դեկտեմբերի 3-ի Կարմիր խաչի կազմակերպության մասին ունեցած որոշման հիման վրա վերականգնված և իր վերջին աշխատանքների ողջ սխառմամբ իր ունեցած բոլոր տնտեսական և բուժական ձեռնարկ-հիմնարկները հանձնեց Համապատասխան մարմիններին և իր վերջին ակտիվության կազմակերպություններին, սանպոստերին, սանդրուժինաներին ստեղծման, բուժ. մասնաշրջանական կազմակերպություններին և քաղաքացիական ազդարանակության մեջ աշխատող մասնաշրջանական աշխատանքների ծավալման լուրջ և արատասխանատու գործը:

Երկրի պաշտպանական աշխատանքներն առանձնապես լավացան պարտիական 18-րդ համադոմարի որոշումից հետո, երբ պարտիական օրգաններին կից ստեղծվեցին ուղղակի բաժիններ:

Եթե 1938 թ. կար 633 կազմակերպություն, ապա 1940 թ. ստեղծվում են 1721 սկզբնական կազմակերպություններ, որոնց անդամները թիվը 34.421-ից հասնում է 94.451 հոգու:

Սանպոստերը նույն ժամանակամիջոցում աճել են 724-ով: ՊՍՊ-ի և ԵՊՊ-ի նորմաները հանձնել են 83051 մարդ:

Վերջին 3 տարվա ընթացքում Կ. խաչի կազմակերպության նվաճումները մեծ են թե՛ կազմակերպական, թե՛ աշխատակցի, թե՛ մասնաշրջանական-մասնաշրջանական ու ղեկավար կազմակերպության պատրաստման և թե՛ սանձավորումների ուղղությամբ:

Նոր ստեղծված սկզբնական կազմակերպությունները թիվը հասել է 721-ի: Նրանց աշխատանքը դարձել է բովանդակալից. Կարմիր խաչի ժողովները տեղի են ունենում սխառմատիկաբար. այդ ժողովներում քննարկում են շատ կարևոր խնդիրներ, օրինակ՝ սանիտարական պաշտպանական պլանները, առողջացման աշխատանքները և այլն:

Կազմակերպություններն ունեն սոցիալական պայմանադրեր, կազմակերպում են սանարշավներ, լեկցիաներ: Կարելի է հիշատակել բազմաթիվ այդպիսի կազմակերպություններ Լենինականից (տեքստիլի, կոշիկի, միսկոմբինատի), Երևանից՝ «Արարատ» տրեստի, սննդային, մանվածքային արտելի, և Շա-հումյանի, Կրուկակայայի, Արովյանի դպրոցների կազմակերպությունները:

Կոլխոզային կազմակերպություններից հիշատակման արժանի են՝ Ջալուռ և Մոլոմոսա գյուղերի (Գուգրենդի շրջան), Մեղրիի՝ Կոնսերվի գործարանի, 2-րդ սովխոզի (Վեդի) և այլ կազմակերպությունները:

Ողջոր աշխատանք է տարված աշխատակցի ուղղությամբ: Ձի կրել ոչ մի քաղաքական ու տնտեսական աշխատանք, որտեղ Կարմիր խաչը հանդես չէր խախտանքներով: Տասնյակ անդամներ կազմակերպվել են ակտիվ Նիստեր:

Հայաստանի Գերագույն Սովետի ընտրություններ

րի ժամանակ առանձնացվել են 125 աշխատողներ: Մեր աշխատանքի առաջավորներին այս տարի Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին արժանացել են 6 ակտիվիստներ, որոնք արդեն գնացել և վերադարձել են:

Դրուժինաների և սանպոստերի անդամներին ղեկավար հեռավոր վայրերը՝ Երևան—Բագու, Լենինական—Արագյաղ—Երևան, Երևան—Սիստա—Սևան կազմակերպվել են հետիոտն արշավներ:

Հայաստանի սովետական իշխանություն 20-ամյա-կի կապակցությամբ կազմակերպվում է դրուժինաների աստղածե արշավ ղեկի այն վայրերը, որտեղ ասպետմամբ ժողովուրդը առաջին անգամ սովետական դրոշ է բարձրացրել: Դրուժինաները դուրս են գալու տարբեր ուղղություններով—Լենինականից, Դիլիջանից, Կիրովականից, Ղաթաբլից, Երևանից և միանալու են Սիստայում, ու միասին տարեկան օրը վերադառնալու են Երևան և մասնակցելու են չեմպիոն:

Ունենք «ՊՍՊ»-ի պատրաստված տասնյակ-հազարավոր նշանակիչներ, որոնք պատրաստ են մեր մարտիկներին ժամանակին տալու առաջին շտապ օգնությունը, մինչև բժշկական օգնություն հասնելը:

Այս վերջին տարիների ընթացքում Երևանի, Լենինականի Կարմիր խաչի ուսումնական կոմբինատները, որոնք ապահովված են լաբորատորիաներով և ունեն լայն հնարավորություններ, պատրաստել ու պատրաստում են բարձր որակի բժշկական թուղթեր, սանհրահանգներ, դեղինֆեկտորներ և պաշտպանական այլ կազմեր:

Ողջոր ուղղություն է դարձվել ղեկավար կազմակերպության պատրաստման վրա. չունենք ոչ մի չընթացի կոմիտեի նախագահ, որը անցած չլինի Կարմիր խաչի հատուկ դասընթացները կա՛մ Մոսկվայում, կա՛մ մեզ մոտ. ավելի ևս մեծ քանակությամբ պատրաստվել են սկզբնական կազմակերպության նախագահներ: Հիշատակման արժանի են սանպոստերի և սանդրուժինաների կառարած գործնական աշխատանքները: Լենինականի բնակավայրի սանպոստը 1940 թ. 6 ամսվա ընթացքում 23 մարդու ցուց է տվել առաջին օգնություն (գանգի կտրվածք, արմուկի ջարդվածք), օգնել է նաև տեղական Կարմիր խաչի կազմակերպություններին, անց է կացրել իր թաղամասում սանարշավ:

Քիչ գործ չեն կատարել Երևանի Սպանդարյան ուսյոնի 2 բուժօգնականները, Կիրովյան, Մոլոտովյան ուսյոնների, Ինչպես նաև կոլխոզների, սովխոզների, ՄՏԿ-ների սանպոստերը: Կարելի է դեռ էլ շատ օրինակներ բերել այդ սանձավորումների կոնկրետ աշխատանքից, սակայն բավականապես այսօր քանով:

Մասնաշրջանական ուսուցման գծով նույնպես խոշոր աշխատանք է կատարվել:

Այս է համառոտ կերպով Հայաստանի Կարմիր

խաչի 20 տարվա անցած ուղին: Մրանք են կազմակերպության նվաճումները, ասնաշաղախակության ապարիվում:

Այս նվաճումները ձեռք բերելու գործում խոշոր դեր է խաղացել մեր սխառմամբ աճած սքանչելի ակտիվը, որի թիվը հասնում է հարյուրների. այդ թվում կարելի է նշել լավագույն աշխատող հին կազմակերպիկներ, բժիշկներ Թովմասյանին, Հարությունյանին, Սողոմոնյանին, Ֆենյա Մատուրյանին, Ասյա Նալյանին, Լուսյա Հովհաննիսյանին և շատ ուրիշներին:

Ակտիվի վրա հենվելով՝ կազմակերպությունը դեռ խոշոր աշխատանքներ ունի կատարելու մեր պլանների որակական ցուցանիշները ապահովելու և կազմակեր-

պությունն առաջադրված խնդիրները կենսագործելու ուղղությամբ:

Հայաստանի Կարմիր խաչն այս բոլոր նվաճումներն ու հաղթանակները ձեռք է բերել Լենինի—Ստալինի անպարտելի պարտիայի ղեկավարությամբ, Ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինի ցուցումների կենսագործմամբ:

Կազմակերպությունը հավաստիացնում է կառավարությանն ու պարտիային, որ նա կամրապնդի ձեռք բերած նվաճումները և է՛լ ավելի մեծ եռանդով կլծվի մեր հայրենիքին նորանոր պաշտպանական կազմեր պատրաստելու մեծ գործին, կազմեր, որոնք պատրաստ են իրենց արյան գնով, հերոսական Կարմիր Բանակի հետ, միասին պաշտպանելու մեր սօցիալիստական հայրենիքի սրբազան սահմանները:

ԿԱԴՐԵՐՆ ԵՆ ՈՐՈՇՈՒՄ ԱՄԵՆ ԻՆՁ: ՍԱ ԱՆՎԻՃԵԼԻ Է: ՀԵՆՑ ԱՅՍ ՊԱՏՃԱՌՈՎ Է՛Լ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԵՆՏԿՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՆՔԱՆ ՇԱՏ ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ Է՛ԻՆ ՀԱՏԿԱՅՆՈՒՄ ԵՎ ՀԱՏԿԱՅՆՈՒՄ ԵՆ ՍԵՓԱԿԱՆ, ԻՍԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՊԱՐՏԲԸ ՀԱՆԱՋՈՂ ԵՎ ԻՐԵՆՑ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՈՒ ԼԵՆԻՆԻ—ՍՏԱԼԻՆԻ ՄԵԾ ԳՈՐԾԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՐԵՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՈՒՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ: ՇԱՏ ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՏԿԱՅՎՈՒՄ ՄԵՐ ԿԱԴՐԵՐԻ ԱՃՄԱՆ ՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՐՈՒՄԱՆ ԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՏԿԱՊԵՍ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ: ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ԲԱՎԱՐԱՐ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՐ ԵՎ ՊԱՀԱՆՁՎՈՂ ՈՐԱԿԻ ԿԱԴՐԵՐ: ՆՐԱՆՔ ԱՆՂՆԻՀԱՏ ԱՃՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԵՏԵՐԻՑ ՄԵՐ ՄԵԾ ԵՐԿՐԻ ՈՒ ԲԱՆԱԿԻ ԱՃՄԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ: ՀԵՆՑ ԱՅԳՊԻՍԻ ՄԱՐԴԻԿ, ԱՅԳՊԻՍԻ ԿԱԴՐԵՐՆ ԵՆ ՄԵՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ԴԱՐՁՆՈՒՄ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ, ԱՆԽՈՐՏԱԿԵԼԻ ԸՍՏ ԻՐ ՈՒԺԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՍՊԱՌԱԶԻՄԱՆ, ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԱԿՆ ԸՍՏ ՈՐՈՒ ՈՒԺԻ, ԸՍՏ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԲԱՐՈՑԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅԱՆ:

ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ԱՅՆՊԻՍԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՆՁՊԵՍ ԿԱՐՄԻՐ ԽԱՋԻ ԵՎ ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԴՐԱՆՔ, ԴԺԲԱՏԱԲԱՐ, ՔԻՁ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՎԱՅԵԼՈՒՄ: ԴՐԱ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ, ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎԱՏ ՁԻ ԵՂԵԼ ԵՎ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԿԱՐԵՎՈՐ ՈՒ ԼԱՎ, ԵԹԵ ՊԱՐՏԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԵՐՈՒՄ ԹԵԿՈՒՋ ԵՐԲԵՄ ՄԻ ՓՈԲՐ ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՅՆՆ ՆՐԱՆՑ:

ՄԵՆՔ ՁԵՆՔ ԿԱՐՈՂ, ԻՐԱՎՈՒՆՔ ՁՈՒՆԵՆՔ ՀԵՏ ՄԱԼՈՒ ՄԵՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ, ՖԱՐԻԿԱՆԵՐԸ, ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՆ ՈՒ ԿՈԼԽՈՋՆԵՐԸ, ԺՈՂՈՎՐԴԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՀԱՐԱՎՈՐ ՀԱՐԱՋԱԿՈՒՄՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԵՐ ԲԱՆԱՋՈՒԹՅԱՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ:

(Քաղվածքներ ՀամԿ(Բ) պարտիայի 18-րդ համագումարում ընկ. վարչիովի արտասանած հառից)

ԱՎԵԼԻ ԽՏԱՑՆԵՆՔ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԿԱՆԱՆՑ ԺԱՐՔԵՐԸ

ՍՍՌ. Միութեան բազմազգ ժողովուրդը տոնեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեուլուցիայի 23-րդ տարեդարձը:

ՍՍՌ. Միութեան ժողովուրդները այդ 23 տարվա ընթացքում իրենց հերոսական պայքարով կերտեցին աշխարհի ամենադեմոկրատական կոնստիտուցիան, Ստալինյան Կոնստիտուցիան, մի պատմական փառաթուղթ, որտեղ ոսկե տառերով նշված են սոցիալիզմի երկրի տարած հաղթանակներն ու նվաճումները:

«Հանելի ու բերկրալի է,—ասում է ընկ. Ստալինը,—գիտենալ, թե ինչի համար են մարտնչել մեր մարդիկ և ինչպես են ձեռք բերել նրանք համաշխարհային պատմական հաղթությունը: Հանելի ու բերկրալի է գիտենալ, որ մեր մարդկանց առատորեն թափված արյունը ապարդյուն չէ անցել, որ այդ արյունը իր արդյունքն է տվել: Այդ հոգեպես զինում է մեր բանվոր դասակարգին, մեր գյուղացիությանը, մեր աշխատավոր խտելիներին: Այդ առաջ է շարժում և բարձրացնում է օրինական հպարտության զգացմունքը: Այդ ամբողջում է հաղթող զեպի մեր ուժերը և մորիկը: Գիտել է ենթարկում նոր պայքարի՝ կոմունիզմի նորանոր հաղթություններ նվաճելու համար»: (Ստալին, Լենինի մի հարցերը, 1940 թ., էջ 651):

Մեր երկրի բազմազգ ժողովուրդը—բանվորները, գյուղացիները, խտելիներին—ստալինյան վառ արևի տակ կերտում են իրենց ունեւոր ու երջանիկ կյանքը:

Նրանք իրենց աշխատանքով ու պայքարով մեր երկրում ավարտեցին սոցիալիստական հասարակարգի կառուցումը, անցան կոմունիստական հասարակարգի կառուցմանն ու անշեղորեն կենսագործելով Լենինի—Ստալինի ցուցումները, առաջ են գնում դեպի նորանոր հաղթանակներ:

1917 թ. Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեուլուցիան նոր ուղի բացեց նաև դարերով ճնշված հայ ժողովրդի համար:

Դարեր շարունակ Հայաստանը հեծել է օտարերկրյա հափշտակիչների տիրապետության տակ: Նրանք ճնշել ու հարստահարել են հայ ժողովրդին, սակայն այդ հափշտակիչներից և ոչ մեկին չի հաջողվել ընկճել հայ ժողովրդի կամքը:

Հայաստանի աշխատավորությունը ոգեշնչված Հոկտեմբերյան Մեծ ռեուլուցիայի հաղթանակներով, բուլշևիկյան պարտիայի գլխավորությամբ, Լենինի—Ստալինի ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի անմիջական օգնությամբ, 1920 թվի նոյեմբերի 29-ին Հայաստանում տապալեց հայ բուրժուազիայի և նրա գործակալ դաշնակների իշխանությունը, հաստատեց սովետական կարգերը:

Մանր էր հայ ժողովրդի դրությունը դաշնակների

տիրապետության շրջանում: Առավել ծանր էր կանանց վիճակը: Կինը տգետ, իրավազուրկ մի էակ էր, որը դիտեր միայն տնային թիացնող աշխատանքը:

Ընկ. Ստալինը հայ ժողովրդի ազատագրման առթիվ 1920 թ. դեկտեմբերին գրում էր՝

«Տանջված ու բազմաշարժ, Անտանտի ու դաշնակների ողորմածությամբ, սովի, ջայթախման ու դաղթի մատնված, բոլոր «բարեկամների» կողմից խաբված հայ Հայաստանն իր փրկությունը գտավ այն բանի մեջ, որ իրեն հայտարարեց սովետական երկիր: Միայն սովետական իշխանության զաղափարը խաղաղության ու ազգային վերածնության հնարավորություն բերեց Հայաստանին»:

Սովետական Հայաստանն իր 20 տարիների ընթացքում հսկայական նվաճումներ է ձեռք բերել ինչպես արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության, արվեստի, նմանապես երկրի պաշտպանության բնագավառում:

Դաշնակցական Հայաստանի փլուտակների վրա, շնորհիվ սովետական կարգերի՝ բարձրացան բազմաթիվ գործարաններ ու ֆաբրիկաներ, կոլխոզներ ու սովխոզներ, որտեղ աշխատում են մեր երջանիկ երկրի երջանիկ բանվորներն ու բանվորուհիները, տարվա աշխատանքի արտադրողականության բարձրացման նորանոր ցուցանիշներ:

Սովետական իշխանության գոյության 20 տարիների ընթացքում անճանաչելի դարձան մեր քաղաքներն ու գյուղերը:

Հայաստանի մայրաքաղաք Երևանը այսօր ունի տասնյակ բարձրագույն հաստատություններ ու հարյուրավոր դպրոցներ, որտեղ սովորում են Սովետական Հայաստանի երջանիկ զավակները:

Այն լեռներում, ուր 20 տարի առաջ դաշնակցական մառդիններն էին վիստում, այժմ արածում են մեր կոլխոզների անհամար հոտերն ու նախիրները:

Անճանաչելի է դարձել մեր բովանդակ երկիրը: Հայաստանի նախկին ճնշված, իրավազուրկ կինն այսօր դարձել է մեր արտադրության առաջավորը և գտնվում է ստախանովյան շարժման առաջին շարքերում:

Սոցիալիստական արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման գուզենթաց օրըստօրի ավելացել ու ավելանում է նաև մանկական հիմնարկությունների ցանցը՝ մսուրներ, մանկապարտեզներ և այլն:

Հայ ժողովուրդն սկսել է ապրել ունեւոր ու երջանիկ կյանքով. նոր կյանքի համապատասխան առաջ են եկել նոր մարդիկ, որոնք լծված են կոմունիստական հասարակարգի կառուցմանը:

Միջանի տարի է, ինչ կապիտալիստական աշխարհում բռնկված իմպերիալիստական նոր պատերազմը մոլորեցնում է, իր մեջ ընդգրկելով իմպերիալիստական նոր երկրներ: Այժմ պատերազմի օրըստօրի մեջ են արգեն Եվրոպայի ու Ասիայի իմպերիալիստական պետությունները:

Սովետական երկիրը անշեղորեն շարունակելով իր խաղաղասիրական քաղաքականությունը, չեղոքություն է սրահարմում և ճիշտ կերպով կատարում է իր միջազգային պարտավորությունները, պաշտպանագրերը:

Մենք խաղաղության կողմնակից ենք ու պաշտպանում ենք խաղաղության գործը. սակայն սա դեռ մեզ չի ապահովում թշնամու հարձակումից: Մենք պարտավոր ենք միշտ հիշել ընկեր Ստալինի ցուցումը կապիտալիստական շրջապատման մասին:

Այժմ մեր առաջնահարգ խնդիրն է լայն կերպով մասսայականացնել ու կենսագործել մեր պարտիայի 18-րդ համագումարի որոշումները:

Այդ որոշումներից ամենակարևորն ու առաջնահարգը հանդիսանում է մեր հայրենիքի պաշտպանությունն է՛լ ավելի ամրապնդելու խնդիրը:

Այդ իսկ տեսակետից ներկայումս մեծ նշանակություն է ստանում մեր երկրի ռազմա-սանիտարական պաշտպանության գործը, որը հատկապես վերջին շրջանում մեզ մոտ լայն ծավալ է ստացել:

Գնալով ավելի ու ավելի մեծանում է Կարմիր խաչի դերն ու նշանակությունը երկրի պաշտպանության գործում:

Այսօր մեր բոլոր գործարաններում ու ֆաբրիկաներում, կոլխոզներում ու սովխոզներում, ձեռնարկություններում ու հիմնարկություններում կազմակերպված են Կարմիր խաչի ռազմա-սանիտարական խմբակներ և նրանց մեջ ընդգրկված եռանդուն կերպով աշխատում են հազարավոր կանայք:

Այս առաջնությունը լավագույն աշխատողներից պետք է հիշատակել Լենինականի տրիկոտաժ գործարանին կից կազմակերպված ռազմա-սանիտարական խմբակի ակտիվ մասնակիցներ՝ Բելալ Մխիթարյանի և Վարսիկ Մարտիրոսյանի անունները, որոնք ոչ միայն հանձնել են «ՊՍՊ»-ի նորմաները, այլև կամավոր կերպով աշխատանք են ծավալում իրենց թաղամասի տնտեսուհիներին ռազմա-սանիտարական խմբակներում ընդգրկելու համար:

Լավ է աշխատում Երևանի Շահումյանի անվան գլորոցի ուսուցչուհի Արփիկ Վարտիկյանը. նա անցյալ տարի այնպես կազմակերպեց աշխատանքը, որ իրենց ողջ կոլեկտիվը ընդգրկվեց Կարմիր խաչի խմբակներում ու ակտիվ կերպով ուսումնասիրեց ռազմա-սանիտարական գործը: Նրանք կոչ ուղղեցին Հայաստանի բոլոր գլորոցական աշխատողներին՝ ռազմա-սանիտարական գործը ուսումնասիրելու համար, ու նրանց կոչին արձագանքեցին Հայաստանի գլորոցական բոլոր աշխատողները:



ԸՆԿ. Մ. ՄԱՆՈՒՇՅԱՆ
Հայկ. ՍՍՌ Կարմիր խաչի կեմսկումի նախագահ

Իր լավ աշխատանքով աչքի է ընկնում Հոկտեմբերյան շրջանի Կարմիր խաչի շրջկոմի նախագահ ընկ. Վարդուշ Կարապետյանը: Շնորհիվ նրա եռանդուն աշխատանքի, շրջանում Կարմիր խաչի խմբակների գործը լավ հիմքերի վրա է դրված:

Լավ են աշխատում Կիրովականի կին հայրենասուները: Նախկին տնային տնտեսուհի, այժմ որպես Կարմիր խաչի շրջկոմի նախագահ առաջ քաշված ընկ. Սիրուշ Ղադախեցյանը լավ է կազմակերպել շրջանում Կարմիր խաչի գծով տարվելիք աշխատանքները:

Կարելի է շատ փաստեր բերել կին հայրենասուների աշխատանքներից, որոնք ցույց են տալիս, թե ինչպես նրանք ոգեղորված լծվել են այդ աշխատանքին, սակայն բավականանա՞նք այսօրվա:

Հայաստանի սովետիզացիայի 20-րդ տարեդարձի կապակցությամբ ամենուրեք լայն ծավալ է ստացել կանանց ընդգրկումը ռազմա-սանիտարական պաշտպանության խմբակներում: Անհրաժեշտ է պահպանել ստեղծված այդ ոգեղորությունը, նորանոր կանանց ընդգրկել այդ խմբակներում և պարտադրել նրանց մեր սոցիալիստական մեծ հայրենիքի պաշտպանության համար:

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԸ ՈՐՊԵՍ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ-ՊԱՃՏՊԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարիատի հանճարեղ առաջնորդներ Մարքսը, Էնգելսը, Լենինը, Ստալինը միշտ բարձր են դնում հատել ազդեցություն-մասսայական աշխատանքների դերը:

Առանց ռեզոլուցիոն թեորիայի, առանց լայն ազդեցություն աշխատանքների ծավալման դժվար կլինեին ամենօրյա ուժեղ կապ հաստատել աշխատավոր մասսաների հետ:

Կարմիր խաչի ընկերությունները հանդիսանալով Կարմիր Բանակի և Ռազմածովային Նավատորմի զորքերի օգնականը, որպես մասսայական պաշտպանական կազմակերպություն, իրենց շարքերում ընդգրկելով մեր երկրի աշխատավորական լայն մասսաներին, զարգացնում են նրանց մեջ սովետական հայրենասիրություն, սեր դեպի սոցիալիստական հայրենիքը, սովետական իշխանությունն ու բուլշևիկների պարտիան, զինում են նրանց սանիտարական պաշտպանության գիտելիքներով, սերմանելով աստվածություն ու թշնամություն դեպի ժողովրդի թշնամիները:

Սովետական առաջավոր մարդիկ ընդունակ են խիզախելու ինչպես տնտեսական ու կուլտուրական ամեն մի բնագավառում, ինչպես էլ մեր սիրելի հայրենիքի պաշտպանության ասպարեզում:

Սովետական Հայաստանի Կարմիր խաչի ընկերություններն իր գոյություն 20 տարիներ ընթացքում խոշոր աշխատանքներ է կատարել իր անդամների մեջ ազդեցություն, մասսայական-դաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում:

Հայաստանի Կարմիր խաչի կազմակերպությունը ղեկավարվելով ՀամԿ(Բ)Պ 18-րդ համագումարի պատմական որոշումներով և ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինի պատմական ցուցումներով՝ մեր երկրի ժողովուրդներին մոբիլիզացիոն պատրաստականություն վիճակում պահելու մասին, հսկայական աշխատանքներ ծավալեց այդ ուղղությամբ, առաջին հերթին լայն մասսաների մեջ ծավալելով ազդեցություն-մասսայական աշխատանքները:

Պարտիայի ու կառավարության բոլոր որոշումները Կարմիր խաչի անդամները մեջ մասսայականացնելուց բացի, սանիտարական պաշտպանության ամրապնդման ասպարեզում ևս կատարվել են խոշոր աշխատանքներ:

ՍՍՍՐ Ժողովուրդների 1938 թ. դեկտեմբերի 3-ի որոշման հիման վրա վերակառուցվելով Կարմիր խաչի աշխատանքները, մեր կազմակերպությունները վերջին 3 տարում ազդեցություն-մասսայական աշխատանքներ

ընդ մեծ թվով բերին շրջափակի նվաճումներ:

Կարմիր խաչի շարքերում աճած ազդեցությունների միջոցով պարտիայի ու կառավարության որոշումները լայն կերպով մասսայականացվել են կազմակերպության ստորին օղակներում. ազդեցությունների թիվն այսօր հասնում է 440-ի:

Ազդեցությունների միջոցով Կարմիր խաչի ստորին կազմակերպությունները սխտեմատիկ կերպով սովորում են աշխատանքի ու պայքարի ձևերն ու մեթոդները:

Հայկական ՍՍՐ Գերագույն Սովետի ընտրություններ ընթացքում առաջ քաշվեցին 370 կին ազդեցություններ, որոնք առաջին անգամ էին մասնակցում քաղաքական կյանքին. դրանց ճնշող մասը տնային տնտեսուհիներ էին. այդպիսիներին հայտնի են ընկ. ընկ. Շուշիկ Ղազարյանը, Վերդուշ Հակոբյանը, Թադևոս Հովհաննիսյանը և շատ ու շատ ուրիշները, որոնք այսօր աճել ու դարձել են Կարմիր խաչի ամենակազմակերպ ազդեցությունները նույնիսկ Երևանի մասշտաբով:

Տեղական սովետների ընտրությունների ընթացքում Կարմիր խաչի կողմից որպես սանիտարական պաշտպանության Ֆրոնտի առաջավոր մարտիկներ 13 ընկերներ (դրանց թիվում 5 կին) առաջադրվեցին գյուղական ու քաղաքային սովետների ղեկավարներ: Դրանցից հայտնի է Կիրովականի Կարմիր խաչի շրջկոմի նախագահ ընկ. Սիրուշ Ղազարյանը: Կիրովականի շրջանի ամբողջ աշխատավորությունը ճանաչում է ընկ. Ղազարյանին որպես մեր հայրենիքի հարազատ զավակի, որպես սանիտարական պաշտպանության Ֆրոնտի անդուլ աշխատողի:

Կարմիր խաչի կազմակերպությունների հիմնական խնդիրներից մեկն էլ տնային տնտեսուհիների մեջ սանպաշտպանական աշխատանք ծավալելն է:

Քիչ գործ էլ արված նաև այդ ուղղությամբ. ազդեցություն մասսայական աշխատանքների լայն ծավալման հիման վրա, Կարմիր խաչի շարքերն են ընդգրկված ավելի քան 35.000, սանիտարական դրուժինաներում՝ 757 և սանիտարական պոստերում՝ 5.144 կին: Այս բանակը աճելով ու դաստիարակվելով Կարմիր խաչի կազմակերպություններում՝ պատրաստ է վաղվա վճռական մարտերում ամուր կանգնելու մեր սիրելի հայրենիքի պաշտպանության դերերում, որպես Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի և Ռազմածովային Կարմիր Նավատորմի զորակազմ:

Հայկական ՍՍՐ բոլոր շրջաններում այսօր գործում են Կարմիր խաչի 63 անկյուններ, որոնք ծավալուն աշխատանք են կազմակերպել մեր բնակչության մեջ սանիտարական պաշտպանության ասպարեզում:

Երևանի «Արարատ» գործարանի Կարմիր խաչի անկյունը 3 տարուց ավելի է, ինչ գոյություն ունի. այնտեղ ամեն օր հաճախում են տասնյակ բանվորներ ու բանվորուհիներ, նրանք շատ դժ են այդ անկյունից և շատ բան են սովորել սանիտարական պաշտպանության գիտելիքների վերաբերյալ:

Կարմիր խաչի նույնպիսի անկյուններ կան նաև կոլտոգների ակումբներին կից:

Կարմիր խաչի կազմակերպությունները տասնյակ անգամներ կազմակերպել են տնտեսուհիներից ու բանվորուհիներից քաղկացած և զանազան տոներին ու ընտրություններին նվիրված հեռավոր ու մոտիկ խաչակիրներ: Կազմակերպված արշավախմբերը հետևանք արշավել են ինչպես Հայաստանի, այնպես և եղբայրական ռեսպուբլիկաների լեռներով ու գյուղերով և աշխատավորությունը ծանոթացրել են սանիտարական պաշտպանության գործին:

Մեր պրակտիկ աշխատանքների հետ միասին սխտեմատիկ բնույթ են կրում կազմակերպվող զրույցներն ու ղեկուցումները. միայն այս տարի արձանագրված են 700-ից ավելի ղեկուցումներ, նույնքան զրույցներ ու դասախոսություններ: Բոլոր շրջաններ

ընդ լայն կերպով մասսայականացվեց խաչի լճի կոնֆլիկտի ակտիվ մասնակցի պրոֆեսոր բժիշկ Ախուրի կատարած աշխատանքների փորձը և «Պատերազմի դեպքում բուժաշխատողի դերը» վերնագրով նրա հոդվածը: Ախուրիյան շարժման ակտիվ մասնակցություն ցույց տվեց ոչ միայն Կարմիր խաչի ակտիվը, այլև բժշկական ողջ պերսոնալը. նրանք իրենց օրակի բարձրագույն, հատկապես պատերազմի դեպքում բուժաշխատողի անելիքները համարեցին օրվա հերթական գործ, սկսեցին արագորեն յուրացնել այն:


Սպիտակ Ֆրոնտի ջախջախման ակտիվ մասնակցի, շքանշանակիր բժիշկ Վազգեն Սարգսյանի հետ կազմակերպվեցին մի շարք հանդիպումներ, որոնց մասնակցեցին Կարմիր խաչի հազարից ավելի ակտիվիստներ և դա թողավ հանդիսացավ ծանոթանալու բուժպերսոնալի հերոսական աշխատանքների հետ:

Կարմիր խաչի և Առողջապահության Ժողովրդական առաջին իսկ կոչին ստեղծվեց դոնորական կազմերի լայն ցանց. հարյուրավոր հայրենասեր կանայք մտան դոնորական կազմերի շարքերը. նրանց թիվը գնալով խտանում է:

Կոլեկտիվ կոնդիտումները դարձել են Կարմիր խաչի աշխատանքների անբաժանելի մի մասնիկը. Կարմիր խաչի Գործկոմի կողմից նկարահանված պաշտպանական կինոֆիլմը ցուցադրվել է տասնյակ



Ագարակի կոլտոգի Կարմիր խաչի կազմակերպությունը դաշտում, պարապմունքի ժամին



Կարմիր խաչի բժշկա-ֆուլքական դպրոցը, սանպոստերը և սանդուխտները մայիսի 1941 թ. 2-ին

դուրսերում և կարմիր-խաչականների կողմից դիտվել է շատ մեծ հետաքրքրություն:

Կարմիր խաչի կազմակերպություններում աշխատանքը ընթացել է աշխատանքի սոցիալիստական մրցման ու հարվածայնության նշանաբանով. չկա մի օդակ, չկա մի կազմակերպություն, որ չունենա սոցմրցման պայմանագիր:

Հայտնի է Կիրովականի բուժօգնությունի և Կարմիր խաչի ակտիվի կողմից ուղղված Հայկական ՍՍՌ-ի բոլոր շրջանների բժշկական և պաշտպանության Փրոնտի աշխատողներին՝ Կարմիր խաչի աշխատանքներն է՛լ ավելի ծավալելու մասին. նրանք իրենց վրա վերցնելով մեծ պարտավորություններ, գործնականում կատարեցին իրենց խոստումը:

Հայաստանի Կարմիր խաչի Կենտկոմը Կարմիր խաչի հոծ մասնաճյուղի պահանջը բավարարելու համար, չնայած մեծ դժվարություններին, այնուամենայնիվ հայտերեն լեզվով հրատարակել է Կարմիր խաչի աշխատանքների վերաբերյալ մի շարք բրոշյուրներ ու պրակատներ. նրանց թիվը շատ է. միայն վերջին 2 տարում հրատարակվել է 5 անուն գիրք, որոնք բոլորն էլ սպառվել են:

Չկա մի թերթ, որ իր էջերում սխառնատիպ կերպով չլուսարարի Կարմիր խաչի նվաճումները: Կարմիր խաչի լայնադուռն ակտիվից անել են տասնյակ թղթակիցներ, որոնք մամուլի ու ռադիոյի միջոցով սխառնատիպ կերպով լուսարարում են տեղերում Կարմիր խաչի աշխատանքները:

Հատկապես վերջին տարիներում սանիտարական պաշտպանության գործի լայն մասսայականացման բնագավառում խոշոր աշխատանքներ են կատարել մեր կենտրոնական ու շրջանային թերթերը:

Այս տարի Հայաստանի Կարմիր խաչի շրջանների գյուղական կազմակերպություններին 6 լայնադուռն շրջաններ իրենց կատարած լայնադուռն աշխատանքների համար որպես պարգև մասնակցեցին Համաժողով-թենական գյուղատնտեսական ցուցահանդեսին, իսկ 5 շրջաններ առաջադրվել են 1941 թ. Համաժողովին: Այդ շրջանների թվին են պատկանում՝ Կիրովականը, Մեղրին, Դիլիջանը և այլն:

Հայկական ՍՍՌ-ի Կարմիր խաչի Կենտկոմը մի շարք միջոցներով խրախուսելով սանիտարական պաշտպանության գծով աշխատող ակտիվին, սահմանել է Հայկական ՍՍՌ-ի Կարմիր խաչի Կենտկոմի պատվով գիր, որին արգեն արժանացել են 150 հոգուց ավելի, որոնց մեծ մասը կոլտնտեսականներ ու կոլտնտեսուհիներ են:

Հայաստանի Կարմիր խաչի կազմակերպությունները, մասնավոր Վերջին տարիների ընթացքում, ՀԿ(Բ)Պ Կենտկոմին և շրջաններին կից ստեղծված ռազմական բաժինների օգնությամբ արահույժեցին սոցիալիստական պաշտպանության աշխատանքները տեղերում, սանիտարական պաշտպանության գծով ձեռք բերին շուրջիսկի նվաճումներ և անցյալ տարի Միության մասշտաբով գրավեցին առաջին տեղը:

Այժմ Կարմիր խաչի կազմակերպությունների հերթական խնդիրն է՝ Հանրապետության ձեռք բերած նվաճումներով, պարտիայի ու համաշխարհային պրոլետարիատի մեծ զորավար, ժողովուրդների սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի ցուցումների անշեղ կենսագործմամբ երկրի սանիտարական պաշտպանության գործում ձեռք բերել է՛լ ավելի մեծ նվաճումներ:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՂԵՐՆ Ի ՄՊԱՍ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

Լենինի գծի անարտադիր դրոշմով, կոմունիստական պարտիայի և նրա հանճարեղ առաջնորդ ընկեր Ստալինի գլխավորությամբ մեր լայնածավալ երկիրը նախկին հետամնաց ու քայքայված վիճակից բարձրացավ տնտեսական զարգացման հզորագույն աստիճանի:

Համաշխարհային պրոլետարիատի սքանչելի հայրենիքի աշխատավորությունը՝ սգեղանված լենինյան ստալինյան մարտական գաղափարներով՝ ստեղծեց սոցիալիստական հասարակարգի յուրահատուկ արդյունաբերություն. երբեմնի դատարկ, անապրած լրդաշտերում ու տափաստաններում բարձրացան հազարավոր արդյունաբերական գիգանտներ:

Յարիգմի կրունկների տակ հեծող ու տանջվող մանր, փոշիացած գյուղական տնտեսությունների փոխարեն, գյուղատնտեսական արտադրության ստալինյան կանոնադրության հիման վրա, գյուղում հաղթանակեցին կոլտոգային կարգերը:

Ժողովրդական տնտեսության անսխալ ծագ վերելքի հետ զուգընթաց, սոցիալական պայծառ ու երբեք չհեղձված հաղթանակով առաջացավ լենինյան երկնակամարի տակ աճեց ու փարթամացավ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան: Այս մասին են խոսում բազմաթիվ բարձրագույն գիտական և հետազոտական հաստատությունները, ժողովրդական կրթության հսկայական ցանցը, բազմաթիվ հասարակական կազմակերպությունները, իսկ եթե սրան ավելացնենք կինոն, թատրոնը, օպերան, դրամաները, կերպարվեստը, երգն ու երաժշտությունը, ապա պարզ կլինի, թե հանճարեղ առաջնորդներ Լենինի—Ստալինի հզորագույն գեղավարությամբ մեր երկիրը տնտեսական ու կուլտուրական ինչպիսի բարձունքների հասավ:

Այս նույն պահին, երբ Սոցիալական Միությունը, որպես մի անտրիկ ժայռ, իր խմբումն քաղաքականության շնորհիվ, շարունակում է կոմունիստական հասարակարգի կառուցման մեծ գործը, դանդաղ աճելի ու աճելի ամրակուռ, այդ նույն ժամանակ կապիտալիստական երկրները բռնված խմբերի աշխատանքի տրտման օգնությամբ՝ իրար են հոչում և փորձում են դրանով կանգնել կապիտալիզմի մոտալուտ կործանումը: Չինայի լուրջ ոչ մի վայրագ միջոց՝ խեղդելու իրենց դեմ—հանդիման կանգնած, կոմունիզմի հաղթանակի դրոշակ բարձրացնող ռևոլյուցիոն պրոլետարիատին, անխնայորեն կործանում են դարերի ընթացքում ստեղծված ժողովրդական կուլտուրայի արժեքավոր կոթողները, ոչնչացնում են աշխարհի լայնագույն մտածողների արժեքավոր գործերը:

Սոցիալական ընտանիքը մեծացավ մի շարք նոր սոցիալական ռեսուրսների (Լատվիա, Լիտվա, Եստոնիա), որոնց երջանիկ ժողովուրդները սոցիալ-

կան խնդրով լցված, հին կապիտալիստական փոստ ու նեխված բեկորների վրա այժմ ստեղծում են իրենց երջանիկ աշարը և աճելի քան երջանիկ ապագան:

Մեծ է այն հաղթական ուղին, որով ընթացել է մեր մեծ սոցիալիստական հայրենիքը:

Այսօր Սոցիալական Հայաստանը բոլորում է իր դոյության 20-րդ տարին: Ուղիղ 20 տարի է անցել այն օրից, երբ Հայաստանի ապագամբ աշխատավորությունը գրկաբաց ընդունեց հյուսիսից եկող ազատարեր Կարմիր Բանակին, որն իր հետ բերեց երջանկություն և հայ ժողովրդի վերածնության սքանչելի գաղափարը:

Նախկին հետամնաց, ցարական դադար, հետագայում կոնտրոկոյոցիոն գաղաղակալների դարձելի տիրապետության հետևանքով քայքայված և սովի մատնված Հայաստանը, որտեղ միայն ու միայն մարդկային դեպքերի կույտեր էին բարձրանում, ազատարեր Հոկտեմբերի դուստր նոյեմբերյան լուսալող ռևոլյուցիայից հետո վերածնվեց իրեն Սոցիալական Հայաստան, դարձավ արդյունաբերական, գյուղատնտեսական երկիր, որտեղ ծաղկում է արվեստն ու կուլտուրան:

Ո՛չ էի հիշում դաշնակցական Հայաստանի դաժան ու մռայլ օրերը. ո՛վ էի զգացել դաշնակցական լկտի մաուզերիստների մտրակների հարվածները. ո՛վ էի հիշում Հայաստանի քարուքանդ տները, ալան ու թալանը, սովալլուկ հոծ մասաներին, որոնց ունկըղում էին ազապներն ու բուերն իրենց չարագուշակ վայելքով:

Սոցիալական Միության անմիջական գեղավարությամբ, եղբայրական ռեսուրսների ջերմ աջակցությամբ, Սոցիալական Հայաստանը վերափոխվեց և դարձավ Սոցիալական Միության ծաղկող ռեսուրսիկաներից մեկը:

Հայաստանը դարձավ արդյունաբերական երկիր. երբեմնի խոպան տարածությունները կենդանացան, անկի նման անեցին տասնյակ գիգանտ գործարաններ, եկեղերկայաններ, մթության մեջ խաբարիող գյուղերում սկսեցին փայլել Իլիչի լապտերները, երկիրը պատկեց հարյուրավոր արհեստական ջրանցքներով, որոնք նոր թափ ու կյանք հաղորդեցին անապատներին ու խոպան դաշտերին, որտեղ մի ժամանակ մոլորեցնում ու օձերն էին հյուրընկալված:

Գյուղացիական մանր փոշիացած տնտեսությունները, որոնք դարեր շարունակ հեծում էին կուլակների դաժան լծի տակ, վերածվեցին ստալինյան կոլտոգների, որտեղ այժմ երջանկության, հարստության, առատության հորդ ազգյուր է հոսում: Աճեցին արվեստի, կուլտուրայի, գիտության տաճարները:

Ահա 20 տարվա հաղթանակների շարանը, որն արդյունք է կոմունիստական պարտիայի փառապանծ դեկամարտի, Լենինի—Ստալինի գաղափարների մարտական կենսագործմանը, որը հայ ժողովրդին տվեց առհասկա երջանկություն և լուսաշող ու պայծառ ապագա:

Սովետական Հայաստանի հաղթական 20 տարիների հիանալի գանձարանում իրենց պատվավոր լուսան են մտցրել բոլոր տնտեսական, արդյունաբերական, գյուղատնտեսական, գիտական կազմակերպությունները: Խոշոր աշխատանք են կատարել նաև հասարակական կազմակերպությունները, որոնք Հայաստանի նվաճումներն ավելի քան փառունակ դարձնելու համար քիչ ղեր չեն կատարել: Դրանցից մեկը հանդիսանում է Հայաստանի Կարմիր խաչը, որն իր ծիրերն է թուել նոյեմբերյան օրերին և այսօր արդեն ունի 20 տարվա դարգացման և հաղթանակների ուղի:

1920—21 թվականներին, քաղաքացիական կռիվների ժամանակ, հակառակ էր Կարմիր խաչի դերը: Նա առողջապահական օրգանների հետ միասին լուրջ և պատասխանատու գործ էր կատարում: Կարմիր խաչը առողջապահական օրգանների կողմից ստեղծվող հակառակ հանցի համար պատրաստում էր մասնագիտական կադրեր: Նա 1923 թվին Երևանում և Լենինականում կազմակերպեց գիտության քույրերի երկամյա դասընթացներ, որոնք 1925 թվին տվին առաջին շրջանավարտները՝ թվով 23 հոգի:

1927 թվին գիտության քույրերի պատրաստման դասընթացները վերակալում են արդեն 6-ամսյա ծրագրով: Այդ դասընթացների միջոցով առողջապահական օրգաններին տրվեց հարյուրից ավելի գիտության քույրեր:

1934 թվից միութենական առողջապահական օրգանների կողմից Կարմիր խաչի վրա դրվում է ստացիոնար բժշկական դպրոցների կազմակերպելու պարտականությունը, որպիսիք անմիջապես հիմնադրվում են Երևանում և Լենինականում:

Այդ ստացիոնար դպրոցներն իրենց գոյությունը պահպանում են մինչև 1939 թվի:

1938 թ. դեկտեմբերի 3-ին Սովետական կառավարությունն ամենայն իրավամբ դրեց Կարմիր խաչի կազմակերպությունների վերակառուցման հարցը: Կարմիր խաչի կազմակերպությունների անջատելով տնտեսական միավորումները, թողեց նրան ռազմա-սանիտարական աշխատանքների կազմակերպման ու մասսայական-մասնագիտական կադրերի պատրաստման լուրջ և պատասխանատու գործը:

Այս պատմական որոշման հիման վրա վերակառուցվեց Կարմիր խաչի ողջ սիստեմը, Կարմիր խաչի կազմակերպություններին տրվեց նոր լիցք և բովանդակություն:

Սովետական Միության Ժողովուրդների որոշմամբ Կարմիր խաչի առաջ դրվեց մասնագիտական կադրերի պատրաստման գործը (բժշկական քույրեր, սանի-

տարներ, սանհրահանգիչներ, ղեկնիֆիկատորներ և այլն):

Ենելով այդ հիմնական սկզբունքից, Հայաստանի Կարմիր խաչի կազմակերպությունը, հատկապես վերջին տարիներում, սոցիալիստական երկրին տվեց հարյուրավոր բժշկական քույրեր, սանիտարներ, սանհրահանգիչներ և ղեկնիֆիկատորներ:

Սովետական Միության Ժողովուրդների մարտական որոշումը նոր եռանդ հաղորդեց սանիտարական պաշտպանության բնագավառում աշխատող մարտիկներին, որոնք նոր նախաձեռնություններով սկսեցին ավելի քան մարտունակ դարձնել Կարմիր խաչի կազմակերպության ներքին օղակները:

1939 թ. հունվարի 16-ին խաղիովի «Հոկտեմբերի» անվան գործարանի հայրենասեր բանվորուհիներին իրենց թոռուցիկ միտինգում կոչ արին Սովետական Միության բանվորուհիներին, հրամանատարների կանանց, ուսումնական հաստատությունների ուսանողուհիներին՝ տիրապետելու բժշկական քույրերի մասնագիտությանը, գինվելու բժշկական գիտելիքներով և դրանով իսկ օգնելու մեր հերոսական Կարմիր Բանակին, նրա մարտնչող հայրենասեր մարտիկներին, որոնք արթուն կերպով հսկում են մեր սոցիալիստական հայրենիքի սրբազան սահմաններին:

Խաղիովի «Հոկտեմբերի» անվան գործարանի բանվորուհիների կոչը լայն արձագանք գտավ Սովետական Միության հայրենասեր աշխատավորուհիների մեջ:

Սովետական Միության անձայրածիր տերիտորիայում՝ գործարաններին, կոլխոզներին, ուսումնական հաստատություններին, կարմիր բանակի տներին կից սկսեցին կազմակերպվել բժշկական քույրերի պատրաստման հարյուրավոր դասընթացներ, որտեղ հազարավոր աշխատավորուհիներ, ուսանողուհիներ, տնտեսուհիներ սովորեցին ու սովորում են բժշկական գիտելիքներ:

Կոչը լայն արձագանք գտավ նաև Սովետական Հայաստանում:

Երևանում և Լենինականում սկսեց կազմակերպվել բժշկական քույրական դասընթացների լայն ցանց, որն իր շարքերն է ընդգրկում մոտ 500 հայրենասեր կանանց, որոնք սովորելով բժշկական գիտելիքներ, պատրաստ են համալրելու Կարմիր Բանակի մարտական շարքերը:

Հայաստանի Կարմիր խաչի կազմակերպությունը սոցիալիստական հայրենիքին յուրաքանչյուր տարի տալիս է 100-ից ավելի բժշկական քույրեր:

«Մենք մեծ ցանկություն ունենք տիրապետելու բժշկական մասնագիտությանը, որպիսի պատրաստվողները վաղվա հերոսական ճակատամարտերին, մեր ա-

մուսիներն ու եղբայրներն հետ միասին դուրս գալ ճակատ և պաշտպանել մեր մարտիկների թանգազին կյանքը»,—գրում են իրենց դիմումների մեջ թագմաթիվ կին հայրենասերներ:


Ահա թե ինչ ցանկություններով է սողորված այսօր յուրաքանչյուր բանվորուհի, տնտեսուհի, ուսանողուհի և աշակերտուհի. մեզ մնում է միայն ստեղծված այդ բուռն խանդավառությունն է՛լ ավելի մեծ եռանդով գլխավորել և ամենուրեք ուսումնական հաստատություններում, արտադրական օբյեկտներում, հիմնարկ-ձեռնարկներում, սովխոզներում և կոլխոզներում, ՄՏ կայաններում և ակումբներում կազմակերպել բժշկական քույրական դասընթացների նոր ցանց՝ այդ հայրենասերներին ընդգրկելու և ռազմա-սանիտարական գիտելիքներ տալու համար:

Խառանի, Խալիսին-գյուլի, Փինյանդական դեպքերի ժամանակ բժշկական քույրերը, հերոսական Կարմիր Բանակի հետ միասին, ցուցաբերեցին խոշոր անձնագործություն:

Մեր պարտիան ու կառավարությունը ցույց են տալիս մեզ ամենալայն հոգատարությունն ու աջակցությունը. նրանք իրենց ամենօրյա օպերատիվ դեկամարտով մեր օգնում են մեզ մեր աշխատանքի ընթացքում:

Կարմիր խաչի կազմակերպությունն իր հաղթական 20 տարիների ընթացքում խոշոր աշխատանք է կատարել աշխատավորության ռազմա-սանիտարական աշխատանքների կազմակերպման և ամրապնդման, ինչպես նաև մասնագիտական կադրերի պատրաստման ուղղությամբ, կադրեր, որոնք այժմ լծված խաղաղ և շինարար աշխատանքի, նպատում են մեր առողջապահական օրգաններին, իսկ վաղը, անհրաժեշտության դեպքում, լինելու են հերոսական Կարմիր Բանակի հավատարիմ հեցուկն ու պայքարի ընկերը:

Ձեռք բերված նվաճումները արդյունք են մեր փառապանծ պարտիայի, մեր Սովետական Կառավարության իմաստուն քաղաքականության. մնում է որ Հայաստանի Կարմիր խաչի կազմակերպությունը, ելնելով մեր վիթխարի նվաճումներից, նոր թափ հաղորդի մասնագիտական կադրերի պատրաստման աշխատանքներին. այդ կադրերը դարձնի ավելի մարտունակ ու գործուն և սոցիալիստական հայրենիքին տա բժշկական քույրերի, սանիտարների, սանհրահանգիչների, ղեկնիֆիկատորների նոր հազարներ, որոնք մեր պարտիայի ու կառավարության առաջին իսկ կոչին կթողնեն ամեն ինչ և իրենց սեփական արյան գնով կպաշտպանեն մեր սքանչելի հայրենիքի սրբազան սահմանները և հերոսաբար կմարտնչեն համայն աշխատավորության բախտավորության ու երջանկության համար:



Երևանի Բժշկական ինստիտուտի սանիտարական շփերթի ժամանակ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՐԵՆ ԱՎԵԼԻ ԱՄՐԱՑՆԵՆՔ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԸ

Հայաստանում սովետական կարգերի հաստատման պայքարի և հաղթանակների 20 տարիների ընթացքում, մեր ժողովրդական տնտեսության փայլուն հաղթանակների հետ զուգընթաց, Հայկական Կարմիր խաչը ՀԿ(Բ)Պարտիայի ղեկավարությունում անցավ կազմակերպական գործունեության աճման ու ծավալման բովանդակային ժամանակաշրջան:

Կարմիր խաչի գործունեությունը առաջին շրջանում կազմակերպական մասսայական աշխատանքները գտնվում էին հետին պլանի վրա և շատ թույլ կերպով զգացվում էին միայն Երևանում և Լենինականում: Տվյալ ժամանակաշրջանում Կարմիր խաչի ուղարկությունը կենտրոնացված էր Կարմիր Բանակի և քաղաքացիական բնակչության բուժօգնություն կազմակերպման վրա, համաշխարհային պատերազմի և քաղաքացիական կռիվների հետևանքով ուրբ, անխնամ մնացած երեխաներին մանկատներում ընդգրկելու, սովորման և աշխատանքի պատրաստման և հաղուստեղեն մատակարարելու վրա: Կարմիր խաչը եղած փոքրաթիվ ակտիվ ուժերով կարողացավ տվյալ պայմաններում մեծ ծառայություն մատուցել սովետական հայրենիքի ամրապնդմանը և խոշոր օժանդակություն ու օգնություն ցույց տվեց պատերազմից տուժածներին:

Կարմիր խաչի գործունեությունը 2-րդ շրջանը, որն սկսվեց ժողովրդական տնտեսության վերականգնման և վերակառուցման ժամանակաշրջանից, տևեց մինչև ՍՍՌԽ ԺԿՍ-ի 1938 թ. դեկտեմբերի 3-ի որոշումը: Այդ ժամանակաշրջանում Կարմիր խաչը մեծ աշխատանք կատարեց ինչպես տնտեսական բուժօգնության, ձեռնարկությունների ցանցը ծավալելու և բարելավելու ուղղությամբ, այնպես և կազմակերպչական-մասսայական աշխատանքների ուղղությամբ, ստեղծելով հարյուրավոր սկզբնական կազմակերպություններ, իր շարքերը ներգրավելով տասնյակ հազարավոր նոր անդամներ: Կարմիր խաչը լուրջ նվաճումներ է ձեռք բերում պատկիստների և եպոսպիստների սրտորոտման գործում, նրանց ակտիվ մասը ներգրավելով սանպոստերը և սանդրուժինաները:

Կարմիր խաչը մինչև 1927 թ. սպասարկում էր Երևան և Լենինական քաղաքները, Վաղարշապատի, Նոր Բայազետի, Մեղրիի, Սև քարի, Չանգեգուրի, Լոռի-Փամբակի, Քելիշենդիի և Ստեփանավանի շրջանները և ուներ մոտ 1500 անդամ:

1928 թվին, Կարմիր խաչի 1-ին համագումարից հետո, Կարմիր խաչի աշխատանքներին մեծ թափ է հաղորդվում: Ստեղծվում են նոր կազմակերպություններ Նալբանդի, Սարգսաբադի, Արագածյանի, Արավելդու, Արիայի, Դիլիջանի, Իջևանի, Ղաթար-

բաժնի պետ)

Ղվի և Մեանի շրջաններում ու մինչև 1930 թվի հունվարը 19 շրջաններում ստեղծվում են Կարմիր խաչի 118 սկզբնական կազմակերպություններ 18.000 անդամով, որից Երևանում 56 սկզբնական կազմակերպություն 4000 անդամով:

Պարտիայի 18-րդ համագումարի նախօրեյին, այսինքն, մինչև 1939 թ. հունվարի մեկը, Կարմիր խաչը սպասարկում էր Հայաստանի 44 շրջաններին 28-ը, որից շտապային 24, իսկ ոչ-շտապային 4: Սկզբնական կազմակերպությունների թիվը հասնում էր 1000-ի, որոնք ընդգրկում էին իրենց մեջ ավելի քան 53.500 հոգի:

Կարմիր խաչի աշխատանքների 3-րդ էտապը 18-րդ համագումարից հետո ընկած ժամանակաշրջանն է:

Պարտիայի 18-րդ համագումարից հետո, հատկապես 1939 թվին, Կարմիր խաչն ապրում էր իր ուժերի ծաղկման վերելքի և քաղաքական ակտիվություն աճման ամենաբարձր շրջանը:

Հայաստանի 44 շրջաններից Կարմիր խաչի սպասարկման մեջ ընդգրկվում են 40 շրջաններ, որից 27-ը շտապային և 13-ը ոչ շտապային: Սկզբնական կազմակերպությունների թիվը համեմատած 1938 թ. հետ, հասնում է 1563-ի: Կազմակերպության անդամների թիվը 53.586-ից հասնում է 85.155-ի:

Բարձրացավ Կարմիր խաչի ժողովրդականությունը և բուռն ցանկություն ու հետաքրքրություն առաջացան դեպի Կարմիր խաչի աշխատանքները: Կազմակերպության անդամների 56%-ը հանձնել է «ՊԱՍՊ»-ի ստալին և 2-րդ աստիճանի նորմաները: Հաղարավոր կանայք ներգրավվել են սանպոստերը և սանդրուժինաները:

Կանայք հանդիսանալով Կարմիր խաչի աշխատանքներում կենտրոնական դեմքը, պատվով են կատարում իրենց պարտավորությունը մեր մեծ երկրի առաջ:

Կարմիր խաչի աշխատանքների արագ վերելքն նորաստեղծ հատկապես Միութենական Ժողովուրդների 1938 թ. դեկտեմբերի 3-ի որոշումը, որով Կարմիր խաչը ազատվելով տնտեսական և բուժօգնություն կան ձեռնարկներից, ուղեցույց ունենալով 18-րդ համագումարի որոշումները և մեր առաջնորդ մեծ Ստալինի ցուցումները՝ կապիտալիստական շրջապատման վտանգի և բնակչությանը մոբիլիզացիոն պատրաստության վիճակում պահելու մասին, իր ամբողջ ուժերը կենտրոնացրեց սանպաշտպանության խնդիրներին կատարման վրա:

Կարմիր խաչի կենտկոմը ելնելով այդ պատմական որոշումից, կազմակերպական մասսայական աշխատանքների ծավալմամբ բարձրացրեց սկզբնական

կազմակերպությունների ուժն ու բովանդակությունը, և իր շուրջը համախմբեց բավականին մեծ թվով ակտիվ:

1935—40 թվերի ընթացքում Կարմիր խաչի շրջաններում առանձնացրին 70-ից—80 արտաշտապային հրահանգիչներ, որոնք մեծ աշխատանք են կատարում սկզբնական կազմակերպությունները կազմակերպողին ամրապնդելու և սանպաշտպանական կարգերի պատրաստման գործում:

Այդ տեսակետից օրինակելի աշխատանք է կատարել Կարմիր խաչի Լենքաղկոմի նախագահ ընկ. Անտոնյանը: Լավաղույն աշխատանքներ են կատարել Կարմիր խաչի Երևանի Սպանդարյան, Կիրովյան և Մոլոտովյան ռազկոմների նախահանգիչները, իրենց աշխատանքով օգնել են ընկնում նաև Ստեփանավանի, խառնաբով օգնել են ընկնում նաև Ստեփանավանի, Մեղրիի, Հոկտեմբերյանի, Կիրովականի, Շամշադինի, Նոր-Բայազետի և Միկոյանի Կարմիր խաչի շրջանների նախագահները:

18-րդ համագումարից հետո տեղերի պարուլը Կոմերի ռազմական բաժինների ղեկավարությունում և օժանդակություն ավելի բարձրացավ Կարմիր խաչի հեղինակությունը, նա դարձավ լայն ժողովրդականություն վայելող հասարակական սանիտարական պաշտպանական կազմակերպություն: Տասնյակ հազարավոր կարգեր սկսեցին յուրացնել առաջին բուժօգնություն գործը, մեծ թվով կանայք ընդգրկվեցին սանպոստերում, սանդրուժինաներում և ակտիվ կերպով ուսումնասիրում են սանիտարական պաշտպանության գործը: Նրանք բազմիցս իրենց գործնական աշխատանքով ապացուցել են իրենց անսահման կան աշխատանքով ապացուցել ղեկի մեր սրբազան հայրենիքը, դեպի մեծ Ստալինը:

Կարմիր խաչի սկզբնական կազմակերպություններում ստանալով մեծ լիցք, իրենց աշխատանքի առաջըրը ստանալով մեծ լիցք, իրենց աշխատանքների հետ կապված հարձրին պաշտպանական աշխատանքների հետ կապված հարցերը, իրենց աշխատանքների մեջ մտցնելով ծրագրայնություն:

Կարմիր խաչի սկզբնական կազմակերպություններում սխտեմատիկաբար հրավիրում են ժողովներ, ուր քննում են սանպոստերի, սանդրուժինաների կազմակերպման և նրանց ուսուցման հետ կապված հարցերը, «ՊԱՍՊ»-ի խմբակների կազմակերպման, նրանցից ակտիվ ստեղծելու ու աճեցնելու խնդիրը, բնակչությանը գոյորական պարտականությունների ընդգրկման մեջ ներգրավելու խնդիրը, սանպոստական և աշխատանքի մեջ ազդեցություն աշխատանքների ծախսման հետ կապված խնդիրները:

Ձգալի աշխատանք կատարվեց սկզբնական կազմակերպությունների անտեսություն կարգավորման խնդրում, հատկապես անդամների և պատկիստների հաշվառման գործի ուղղությամբ:

Կարմիր խաչն ունի մեծ թվով լավաղույն սկզբը:

Նախան կազմակերպություններ, որոնք իրենց պլաններին կատարման և քաղ-մասսայական աշխատանքներին ծավալման գործում ձեռք են բերել մեծ նվաճումներ: Այստեղ անհրաժեշտ է հիշատակել Լենինականից՝ տեքստիլ, միսկոմբինատի, մեխգործարանի, փայտամշակման, կարի, կոշիկի, գործարանների, առաջին և երկրորդ թաղամասերի սկզբնական կազմակերպությունները: Ստեփանավանից՝ Ագարակի դպրոցի, Լեջանի կոլխոզի և Ստեփանավանի ուսսական ու միջնակարգ դպրոցների սկզբնական կազմակերպությունները: Երևանից՝ Կիրովյան ռազկոմից՝ Շահումյան դպրոցի, Չոռվետ ինտերուտուի և բժշկական տեխնիկումի կազմակերպությունները: Սպանդարյան ռազկոմից՝ «Արարատ» գործարանի, Երանդատի, մանկավարժական ինստիտուտի կազմակերպությունները: Մոլոտովյան ռազկոմից՝ Տրամվայի պարկի կազմակերպությունը: Մտալինյան ռազկոմից՝ Ձեթ օճառ և կազանովիչի անվան դպրոցի կազմակերպությունը: Նոր-Բայազետից՝ Ղալալի կոլխոզի և գյուղատնտեսական տեխնիկումի կազմակերպությունները: Մեղրիից՝ Կոնսերվի գործարանի կազմակերպությունը:

Կարմիր խաչի սկզբնական կազմակերպությունների լավագույն նախագահներին են՝ ընկ. ընկ. Թոխմախչյան Արաքսին («Արարատ» գործարան), Վարտիկյան Արփիկը (Երևանի Շահումյան դպրոց), Վերմիլյան Զաքարը (Ստեփանավանի Ագարակ գյուղ), Պողոսյան Անդրանիկը (Դուգլենդի Զալուզ գյուղ), Վարդանյան Սրապը (Լենինականի միսկոմբինատից), Պետրոսյան Մկրտիչը (Լեն. մեխ. գործարան), Մարգարյան Սարգիսը (Լեն. տեքստիլ շին.), Սվետիայան Պյոռան (Լեն. 1-ին թաղամաս), Գրիգորյան Անահիտը (Լեն. 2-րդ թաղամաս):

Կարմիր խաչն իր պայքարի և աշխատանքի 20 տարվա նվաճումներով այսօր գտնվում է միութենական ուսպուրելիական Կարմիր խաչի կազմակերպությունների առաջավորների շարքում: Նա իր գործունեությամբ նոր էջ է բաց անում Կարմիր խաչի պատմության մեջ՝ իր վրա կրելով սոցիալիստական մեծ հայրենիքի սանիտարական պաշտպանության պատասխանատու գործը:

Հայաստանի Կարմիր խաչի ողջ ակտիվ սովետական կարգերի հաստատման 20-րդ տարեդարձից հետո, նոր լիցքով, կոմունիստական պարտիայի և նրա հանձարեղ առաջնորդ մեծ Ստալինի ղեկավարությամբ ավելի մեծ եռանդով կլծի սանպաշտպանության գործին, իր շուրջը համախմբելով և առաջ քաշելով նորանոր կարգեր, կենտրոնացնելով, կղապտիարակի նրանց սովետական հայրենասիրության ոգով, որպեսզի Սովետական կառավարության և մեր առաջնորդի առաջին իսկ կոչին դուրս գան իրենց կյանքի ու արյան գնով պաշտպանելու մեր հայրենիքի սրբազան սահմանները:



ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ

Սովետական Հայաստանը զանազաներից ստանալով ծանր ժառանգություն՝ միանգամայն քարուքանդ եղած երկիր՝ համաճարակային հիվանդությունները բռնաբեր, որովայնային և հետադարձ տիֆեր, նույնիսկ խոլերա, հերոսական ուժ պետք է դործադրեր երկիրը խորտակվելուց ազատելու համար:

Մենք, մասնագետներս չէինք կարող մեր ուժերն ու գիտությունն իսպառ չզենել երկրի վերականգնման համար:

Երիտասարդ Սովետական երկիրն այն ժամանակ հասարակական կազմակերպությունների օգնությամբ կարելի էր զգուշացնել:

Մենք հատուկ միջոցներ չունեինք: Հայաստանի աշխատավորությունը օգնելու համար մենք միջոցներ էինք հայթայթում կամ հասարակական կարգով կամ անտեսական հիմնարկներ կազմակերպելով:

Այն ժամանակ ես Ղարաբլիկսայում (Կիրովականում) էի աշխատում: Բժշկական բրիգադայի հետագոտումը պարզեց, որ Համամվիլի շրջանում շատ կան մաշկի հիվանդություններ, ենթադրվում էր նույնպես սիֆիլիսի առկայությունը: Կարմիր խաչի երիտասարդ բնակերությունն արագ կերպով արձագանգեց և համամվիլի ենթաշրջանի քաղաքացիական ազգայնական շրջանը սպասարկելու նպատակով Մեծ Պարնի գյուղում կազմակերպեց բժշկական:

Հիշում եմ՝ ինչպես մեկ ամիս 1926 թ. ես մեկնեցի Ղալթաղի գյուղը երեխաների համաճարակի դեմ պայքարելու համար:

Ինձ չափազանց դարձացրեց մի երեույթ, որ Ղալթաղի գյուղում ամենամեծ հասակի երեխաները վեց տարեկան էին, դրանից բարձր տարիքի չկային:

Պարզվեց, որ թուրքերի հարձակման ժամանակ բոլոր երեխաներն ու կանայք կոտորվել էին, իսկ ամուսինները սովետական իշխանության օրով վերադառնալով ամուսնացել էին և բնական է, որ 1926 թ. ամենի մեծահասակ երեխաներ գոյություն ունենալ չէին կարող:

Բուժկայանի վարիչ բժ. Ա. Իշխանյանի ուժերով համաճարակը Պարնիում արագ կերպով լիկվիդացիայի ենթարկվեց: Տարեցտարի բժշկական օգնության պահանջը մեծանում էր, և Կարմիր խաչի Կոմիտեն նախադրում հատուկ շենք կառուցեց:

Բուժկայանը, որտեղ որպես մաշկի հիվանդությունների մասնագետ բժ. Աֆրիկյանն էր աշխատում, իր գոյությունը մի քանի տարի Կարմիր խաչի հաշվին պահպանեց: Ժամանակին երբ բնակչությունն այլևս այդ մասնագետի կարիքը չգգաց, պունկտը փակվեց և շենքը Սուրբ Երանի հանձնվեց: Այժմ այդ շենքում կազմակերպված է բուժկայան ծննդաբերական մասնակալներով:



Բժ. ԱՇՈՏ ԹՈՎՄԱՍՅԱՆ
Հայկական Կարմիր խաչի հին, լավագույն աշխատողներից

1932 թ. Կարմիր խաչի կողմից ես մոբիլիզացիայի ենթարկվեցի Անդրկովկասի ռազմական օկուպացիոնական ուսուցումներին մասնակցելու համար: Ուսուցումները տեղի ունեցան Կիրովականի ռազմիկ Ղարաբլիկսայում՝ Էվակուացիայի կազմակերպվեց, իսկ Բգովդալում վերականգնական արշավախումբ:

Ուսուցման քսան օրվա ընթացքում գոսպիտալի միջոցով բաց թողինք մինչև 180 հիվանդ և պատահական վերադարձներ:

Հիշում եմ՝ ինչպես ոգևորվեցի, էնտուզիազմով էին աշխատում մեր դրոժինիկները:

Փոխադրվելով Լենինական՝ ես շարունակեցի աշխատանքս Կարմիր խաչի դեմ: Բնական է, ամրապնդված սովետական իշխանությունը հասարակական կազմակերպությունների այդ ձևի օգնության կարիքը չէր զգում:

Կարմիր խաչի կազմակերպության առաջ նոր խնդիրներ դրվեցին «Պատրաստ լինել երկրի պաշտպանության»: Մենք վերականգնվեցինք այդ ուղղությամբ և այժմ ամեն տարի մեր Սոցիալիստական երկրին հարյուրավոր բուժքույրեր, սանիտարներ, տանյակ հազարավոր ՊՍՊ-ի նշանակիչներ ենք տալիս:

Ես որպես Կարմիր խաչի հին աշխատող դեռ շատ էներգիկ կարող եմ ի սպաս դնել և պարտիայի ու կառավարության առաջին իսկ կոչին պատրաստ եմ լինել դրոժինայի շարքերում:

Բժ. Ա. Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ



Ղուլալիի կոլտոգի սանպոստը անց է կացնում սանիտարական շաքաթ-ոբյակ

Մ. ՏԵՐՏԵՐՅԱՆ
(Կարմիր խաչի Կենտկոմի ՀՕՊ-ի տեսուչ)

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՏՈՒՄՆ ՈՒ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԸ

Հայաստանում Կարմիր խաչի ընկերության կազմակերպված միջանի ամիս հետո Հայաստանի պրոլետարիատը և աշխատավոր գյուղացիությունը կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, հերոսական Կարմիր Բանակի օգնությամբ, 1920 թ. նոյեմբերի 29-ին տապալեց դաշնակցական կառավարությունը և Հայաստանում հաստատեց պրոլետարիատի դիկտատուրա:

Դաշնակցականների տիրապետությունից ժառանգություն էր մնացել քանդված և ավերակների վերածված մի երկիր, որը զալարվում էր սովի ու աղքատության ճիրաններում:

Սովետական իշխանության առաջին իսկ օրից մեր պարտիան ու կառավարությունը ձեռնամուխ եղան քաղաքացիական երկրի տնտեսական կյանքի վերականգնմանը:

Այդ ժամանակաշրջանում Կարմիր խաչի կազմակերպությունը մեր կառավարության օգնությամբ մի կողմից կազմակերպում էր որբերի ու սովյալների

անդի գործը, մյուս կողմից, առողջապահական օրգաններին օգնելու նպատակով, կազմակերպում էր մեր լայն մասսաների առողջապահական գործը, կազմակերպելով բուժֆունկցիաներ, հիվանդանոցներ, բուժարաններ, մալարիայի կետեր և այլն:

Կարմիր խաչի հիմնական խնդիրներից մեկն էլ հանդիսանում է մոբիլիզացիայի ենթարկել աշխատավորության լայն մասսաներին երկրի ռազմական պաշտպանության շուրջը, պատրաստել նրանցից մասսայական կազմեր սոցիալիստական հայրենիքի պաշտպանության համար:

Հայկական Կարմիր խաչի կազմակերպությունը, հանդիսանալով ՍՍՌՄ Կարմիր խաչի կազմակերպությունների մի մասնիկ, իր գոյության առաջին իսկ օրից լծվեց վերահիշյալ խնդիրներ իրականացմանը:

Դժվար է մեկամեկ հիշատակել այն բոլոր աշխատանքները, որ կատարել է Կարմիր խաչը իր գոյության առաջին տարիներում:

1927 թ/թ Կարմիր խաչի աշխատանքների տեսա-

Չին արշավախմբի ղեկավարը ես էի: Բացի սիֆիլիսի բուժումից կատարում էինք նաև մանրագեղձի հետազոտություն, կազմակերպում էինք սիֆիլիսի վերաբերյալ հանրամատչելի դաստիարակություններ ու զրույցներ, մոզական լապտերով ցույց էինք տալիս սիֆիլիսի առաջացման ու տարածման պատճառները և նրա թուղած հետևանքները:

Մեր աշխատանքները հաճախակի ստուգման էին ենթարկվում Անդրկովկասյան Կենտրոնական ներկայացուցիչների կողմից, որոնք բացի ստուգելուց, մեր աշխատանքներին ցույց էին տալիս մեծ օժանդակություն: Օրինակ, մենք նրանց օժանդակությամբ կարողացանք վերջ տալ գյուղացիներին այն դարավոր սովորությունը, երբ առանձին ընտանիքներում, ինչպես նաև հարսանքատներում ու մեռելատներում, մի քանի հոգի ուտում էին միևնույն ամանից, և սովորություն դարձրինք, որ հասարակական խնջույքների ժամանակ հյուրերին իրենց հետ տանեն իրենց գլխին ու ամանը, և վերջ տրվեց ընտանիքներում մի ամանից միասին օգտվելուն: Սա խոշոր չափով կանխեց հիվանդություն տարածումը:

1929 թվականին մեր առաջին վենարալախումբը երկուս ու կես ամսով տեղափոխեցին Փանիկ, որի

մի շարք գյուղերում ևս տարածված էր սիֆիլիսը: այստեղ ևս կատարեցինք մանրամասն հետազոտություն, հաշվի առանք բոլոր հիվանդներին ու հանձնեցինք նրանց բուժկայանին՝ բժշկվելու:

Մեր աշխատանքներին խոշոր օժանդակություն էին ցույց տալիս նաև գյուղերի Կարմիր խաչի բժշկները, որ համարյա բոլոր գյուղերում կազմակերպել էին տեղի պարտիական և հասարակական կազմակերպությունները:

1929 թ. օգոստոսին ինձ տեղափոխեցին Նալբանդի (Համամլի շրջան) նորակառույց բուժարանը որպես վարիչ: Բուժարանի բյուջեն կազմում էր 28.000 ռուբլի, սակայն ունեցանք գերաժախս և մեզ հատկացրին նորից 2400 ռուբլի:

Մեր աշխատանքներին օժանդակելու համար Լենինականի առաջինից հաճախ գալիս էին բրիգադներ: Կոլխոզային շարժման ժամանակ մեր բուժկայանը իր արամադրություն տակ ուներ դիպուկությամբ մոզական լապտեր, որն ստացել էինք Լենինականի առաջինից և զրույցների ընթացքում ցուցադրում էինք, շրջելով Համամլի բոլոր գյուղերը:

1930 թ. ձեռնարկեցինք Համամլի և Մեծ Պարսի շրջանի 9 գյուղերում մասսայական տնային հե-

տագոտություն մասնակցությամբ բժշկ Գեորգի Պապուկյանի և Օմարյանի:

Ինչպես մեր վենարալախումբը, այնպես և շրջանում գործող մյուս վենարալախումբերը պատվով կատարեցին իրենց վրա դրված պարտականությունները:

Նալբանդում մենք մեծ մասամբ կոմերիտուհիներից կազմակերպեցինք նաև առաջին օգնության խումբակներ: Նման խմբակներ կազմակերպել էինք նաև Մեծ Պարսիում: Փորձական պարապմունքներն անց էինք կացնում բուժկայանում: Գերագանցիկ սովորողներին ընդունել տվինք Լենինականի Կարմիր խաչի բուժարանի և մանկաբարձական դպրոցները: սրանք ավարտեցին լավ դաստիարակներով և միջանիսը դեռ մինչև օրս էլ աշխատում են Նալբանդի շրջանում:

Կարմիր խաչի միջոցներով մենք մշակեցինք բուժկայանի առաջ գտնվող մեկ ու կես հեկտար խոպան տարածությունը և առաջին անգամ այդ հողամասում ցանկերով կաղամբ, պտիղոր, բադրձան, տաքտեղ, ստացանք առատ բերք:

* * *

Միջանի խոսք Կարմիր խաչի դրուժինաների մասին:

Ես մի շարք անգամներ Կարմիր խաչի դրուժինաների հետ մասնակցել եմ նաև զորաշարժերին. այսպես, 1928 թ. մայիսի 1-ի ժամանակ ինձ էին հանձնել Լենինականի Կարմիր խաչի դրուժինան:

1929 թ. Լենինականի դրուժինայի հետ ես մասնակցում էի Անդրկովկասյան զորաշարժին, որը կայացավ Մուխրանում: Չափազանց լավ էր կազմակերպված Լենինականի դրուժինան: Թե՛ Միջինի լեռներում, թե՛ Մուխրանի շրջանի մացառուտ անտառներում, նա հաղթահարում էր ամեն մի դժվարություն, Կարմիր Բանակի շարքերից չէր հեռանում և ընթանում էր միշտ առաջին շարքերում:

1931 թ. Անդրկովկասյան զորաշարժի ժամանակ, որը կայացավ Մուխրանում, ես նորից Լենինականի Կարմիր խաչի դրուժինայի հետ էի. այդ շրջանում, որը չափազանց դժվար էր, լավ էին աշխատում Հաբուսյանը, Վաղդենը, Մարուսյան և շատ ուրիշները, որոնց ազգանունները չեմ հիշում:

1932 թվականին Լենինականի դրուժինան նորից մասնակցեց Անդրկովկասյան զորաշարժին: Այս դրուժինան տարբերվում էր նախորդ դրուժինաներից: Այս անգամ դրուժինային մասնակցում էին նաև Լենինականի տեղափոխված բանվորուհիները՝ Սիրուշը, Մանյան, կանի տեղափոխված բանվորուհիները:



Դուգեկոյի սանպոստը հիվանդ փոխադրելիս

Արուսը և ուրիշները, որոնք Լենինականի ու Երևանի դրուժինաների մյուս անդամներից աչքի ընկան թե՛ իրենց որակով և թե՛ իրենց տոկոսնություններով:

Հրամանատարությունը դիտավորյալ կերպով Բզովդալի առաջին պոնտիկից ընտրում էր այդ բանվոր ուժերին և ուղարկում էր նրանց առաջին շարքերը: Եվ մեր հարվածային բանվորուհիներն իրենց աշխատանքով ապացուցում էին, որ նրանք կարող են պահանջված բույսերն թողնել դադարաչափ, բարձրանալ լեռներն ու մարտիկներին ցույց տալ բժշկական օգնություն:


Շատ լավ եմ հիշում, թե ինչպես մի գիշեր, երբ մենք Բզովդալում հանգստանում էինք, հրաման ստացանք առաջին օգնության կայան հիմնելու համար Դվալով գետի Գյարդառի սահմանն ուղարկել մեկ օդակ: Մեր անձնակազմը աղջիկները, հրամանը լսելու պես, միաբերան ցանկություն հայտնեցին ու վերկացան:

Ես դիտավորյալ կերպով ուղարկեցի տեղափոխված բանվորուհիներին ու մի 3 հոգի էլ մյուս սարի գաղաթն ուղարկեցի: Օրն անձրևային էր, սակայն մենք ժամկետից շուտ հաղթանք նշված վայրը, կատարեցինք հրամանը, որի համար ստացանք շնորհակալություն:

Այսօր, Մովսեսյան Հայաստանի 20-րդ տարեդարձի առթիվ, վերհիշելով Կարմիր խաչի կատարած աշխատանքները, խոսք եմ տալիս նույն թափով ու եռանդով մասնակցելու Կարմիր խաչի դրուժինաներին, որոնք կազմ ու պարտադիր պարտիայի ու կառավարության առաջին խիղճն ունեն հեղինակության Կարմիր Բանակի հետ միասին պաշտպանելու մեր սոցիալիստական հայրենիքի սահմանները:



Կալինինոյի Կարմիր խաչի սկզբ. կազմակերպությունն ասուգում է կոտայրատիվի սանիտարական դրուժությունը



Ագարակի Կարմիր Խաչի սկզբ. կազմակերպությունը սանիտարական ռեյդում

Բժ. ԳԱՐՐԻԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԱՆՑՅԱԼ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սովետական Հայաստանի 20-րդ տարեդարձի մեծ և պատմական տոնը մեր երկրի և ժողովրդի վերածնունդի տոնն է: Անցած 20 տարիների ընթացքում ինչպես երկրի տնտեսութան և կուլտուրայի մեջ, նմանապես ժողովրդի կենցաղի և նրա մտայնության մեջ կատարվել են այնպիսի հսկայական փոփոխություններ, որ կարծում ես, ոչ թե ապրել ես մեկ, այլ մի քանի կյանք: 20 տարվա անցած ճանապարհը Սովետական ժողովրդի համար մեծ և ծանր աշխատանք է, դժվարությունների և պայքարի ճանապարհ է:

Այսօր, երբ մարդ հետադարձ հայացք է գցում գեղի անցած ճանապարհը, առանձին բախականություններ վերհիշում է, թե ինչպիսի ճանապարհներով են ձեռք բերվել մեր հաջողություններն ու հաղթանակները:

Այս 20 տարվա ընթացքում Հայաստանի Կարմիր խաչը բախականին մեծ աշխատանք է կատարել մեր երկրի սանտառարանության կազմակերպման առաջադրությունը:

Ավելի քան 6 տարի ես աշխատել եմ Հայաստանի Կարմիր խաչի առողջապահական ցանցում. նա անցյալում ուներ առողջապահական խոշոր ցանց՝ հիվանդանոցներ, արոպկայաններ, առկայաններ, դեղատներ և այլն, որոնք իր ժամանակին նկատելի դեր խաղացին մեր աշխատավորության առողջապահության կազմակերպման գործում:

Բուժհիմնարկներից ամենամեծը հանդիսանում էր Կարմիր խաչի Երևանում բացված կանանց հիվանդանոցը, որտեղ աշխատել էին ավելի քան 6 տարի: Այս հիվանդանոցի կազմակերպումը, նրա աշխատանքների ծավալումը հանդիսանում է Կարմիր խաչի գործունեության փայլուն շրջաններից մեկը:

1931 թվականի ամառը քաղաքի տարբեր մասերում բացվեցին ևս 2 փոքր հիվանդանոցներ, որոնք 1932 թ. աշնանը կենտրոնացվեցին մի շենքում, հիմնականորեն վերանորոգված: Ես մեծ բախականություն եմ վերհիշում այն հոգատարությունն ու ռազմերությունը, որ ցույց էր տալիս մեզ Կարմիր խաչի

չի կենտրոնումը, նա օգնում և հետևում էր հիվանդանոցին, նրա տնտեսության կազմակերպման աշխատանքներին:

Կարճ ժամանակամիջոցում հիվանդանոցին կից կազմակերպվեց բանջարանոց, որը թարմ բանջարեղեն էր մատակարարում հիվանդանոցին և աշխատակիցներին:

Ստեփանավանում կազմակերպվեց կաթնատնտեսային ֆերմա՝ հիվանդանոցը յուզով և պանիրով ապահովելու համար: Ֆերման աշխատեց մոտ 2 տարի, որից հետո լիկվիդացիայի ենթարկվեց և կազմակերպվեց Երևանում հիվանդանոցին կից՝ հիվանդներին թարմ կաթ տալու համար:

Հիվանդանոցի բացումից մի տարի հետո, հիվանդանոցին կից բացվեց կանանց հիվանդությունների ամբուլատոր ընդունելություն, որտեղ հենց առաջին տարում բուժ. օգնություն ցույց տրվեց ավելի քան 4000 երթևեկ հիվանդի, որոնց թիվը 2-րդ տարում հասավ 6000-ի, իսկ 3-րդ տարում կրկնապատկվեց:

Հիվանդանոցի ծավալվող աշխատանքը ստիպում էր մտածել նոր շենքի մասին և Կարմիր խաչի կենտրոնը կառուցեց հիվանդանոցի համար նոր շենք, որը ներկայումս մեր մայրաքաղաքի հիվանդանոցների լավագույն շենքերից մեկն է: Այս շենքի ներքին հարկում բացվեց պոլիկլինիկա-ներքին, ներվային, մանկական, կանանց, քթի և կոկորդի, տրոպիկական հիվանդությունների և վերաբուժական կարիներտներով, որոնք աչքի են ընկնում իրենց կազմակերպվածությամբ: Այստեղ աշխատում էին քաղաքի փորձված բժիշկ-մասնագետները: Միաժամանակ բացվեց ռենտգենյան բաժանմունք նորագույն սխեմայի ապարատներով: Քիչ հետո կազմակերպվեց ինքալատորիա, որը քաղաքում միակն էր:

Ծննդաբերական և գինեկոլոգիական բաժանմունքներն ևս տեղափոխվեցին հին շենքից և ավելի մեծ



Բժ. ԳԱՐՐԻԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կարմիր Խաչի լավագույն, հին աշխատողներից

հարմարություններով տեղափոխվեցին նոր շենքում:

Կարմիր խաչի կենտրոնը միշտ ուշադիր կերպով հետևում էր հիվանդանոցի աշխատանքներին և ապահովում էր հիվանդանոցը մասնագիտական գրականությամբ, գեղարվեստով, գործիքներով և այլն:

Հիվանդանոցում աճում և մասնագիտանում էին երիտասարդ բժշկական կադրերը: Հիվանդանոցը բազա էր հանդիսանում Կարմիր խաչի քույրական դպրոցի աշակերտության հիմքի գործնական աշխատանքների համար:

1938 թ. դեկտեմբերի 3-ին Ժողովմսովետի որոշմամբ Կարմիր խաչի կենտրոնը առողջապահական բաժիններին հանձնեց իր հիվանդանոցները և ձեռնարկները և իր վրա վերցրեց երկրի սանիտարական պաշտպանության կադրերի պատրաստման գործը:

Մենք, Կարմիր խաչի նախկին առողջապահական ցանցի աշխատողներս, ամենաջերմ հիշողություններ ենք պահպանել մեր այդ անցած աշխատանքի մասին: Անցած տարիների փորձը և Կարմիր խաչի ներկա աշխատանքները ցույց են տալիս, որ նա փայլուն կերպով կկատարի իր վրա գրված սրբազան պարտականությունները և ավելի բարձր աստիճանի կհասցնի մեր երկրի սանիտարական պաշտպանության գործը:



Երևանի Ստալինյան դպրոցի վերադարձից

Կիրովականի շրջանի Կարմիր խաչի կազմակերպու-
թյունը հաղթական նվաճումներով է ղեկավարորում
Հայաստանում սովետական կարգեր հաստատելու
20-րդ տարեդարձը :

Պատմական 18-րդ համադրմարի որոշումները անհեղ կենսագործելով մենք հասանք այն բանին, որ այսօր Կարմիր ինչք իր բեղմնավոր աշխատանքի արդյունքներով դասվում է Հայաստանի առաջավոր կազմակերպութունների շարքը:

Պարտիական ռալկոմի ամենօրյա ղեկավարում-
թյամբ մենք կարողացանք շրջանի բոլոր գյուղերում .
արաաղբական ձեռնարկություններում և հիմնարկու-
թյուններում ստեղծել Կարմիր Սաչի սկզբնական կազ-
մակերպություններ և սանիտարական պոստեր: Նրանց
աշխատանքների արդյունքները մեծ են և արդյունա-
վետ: Երջանի զինակոչիկները բոլորն ել հանձնեցին
«ՊՍՊ»-ի նորմաները. այժմ շրջանում կան 1813 պաս-
պիստներ, 25 սանիտարական պոստեր, Կարմիր Սաչի
54 սկզբնական կազմակերպություններ 3210 անդամ-
ներով:

Քիմիական գործարանի հայրենասեր բանվորների ցանկությամբ վերջերս կազմակերպվեց մեկ սանիտարական դրոժինա և չնայած կազմակերպման կարճ շրջանին, դրոժինան հսկայական աշխատանքներ է ծավալել իր անդամների մեջ ուղղա-սանիտարական պաշտպանութան գործում :

Շրջանի 29 դպրոցներում կազմակերպվում են սխառեմատիկ զբոլոյցներ, զեկուցումներ ու առողջապահական լեկցիաներ: Բնակելի տներում կազմակերպված են միջանի սկզբնական կազմակերպություններ, որոնց մեջ ընդգրկվել են ավելի քան 200 տնտեսուհիներ:

Շրջանում գործում են Կարմիր ինչի 16 կարմիր անկյուններ, որոնք խոշոր գործ են կատարում բնակչության մեջ սահմանափակում պաշտպանությունը մասնաբաժանումներով գործում:

Միքանի տարի է, ինչ շրջկենտրոնում կազմա-
կերպված է սանիտարական դրուժինա. նրա կատա-
րած աշխատանքները չատ խոշոր են և չոշակելի:
Ծրվանի աշխատավորությանը հայտնի է դրուժինայի
կատարած մեծ գործը. դրուժինան բացի իր անդամ-

ների ուղղամասնիկության պատրաստականության
բարձրացումից մեծ աշխատանք է ծավալել բնակչու-
թյանը սանիտարական օգնություն ցույց տալու գոր-
ծում. որպես լավագույն աշխատողներ աչքի են ընկ-
նում ընկ. ընկ. Ս. Մկրտչյանը, Հ. Նավասարդյանը,
Ն. Կիրակոսյանը և շատ շատերը:

Մեր աշխատանքների հիմնաքարը համարելով նաև պիոներ դպրոցականների մեջ սանիտարական պաշտպանություն գործի մասսայականացումը, ծախսերուն աշխատանքներ ենք կազմակերպել նաև այս ուղղությամբ. չըլանում չլա մի դպրոց, որտեղ չլինի Կարմիր Սաչի սկզբնական կազմակերպություն: Հայտնի է Շահալուի դպրոցի հայրենասեր պատանիների լայն շարժումը, պաշտպանության գիտելիքներին տիրապետելու ձգտումը. նրանք հասան իրենց ցանկությունների կատարման, այսօր այդ դպրոցն ունի 300-ից պլեյի աշակերտներ, որոնք կրում են «Եղիբ պատրաստ սանիտարական պաշտպանություն» կոծբանչանք: Նույնպիսի հաջողություններ են ձեռք բերել Յաղուբուլի և չառ ուրիշ դպրոցների դպրոցները:

Մեր աշխատանքներին մեծ աջակցութիւն է ցույց տալիս շրջանի բուժանձնակազմը: Առբաժնի վարիչ ընկ. Միրզոյանը դարձել է Կարմիր ինչի մասնակցի սիրոված ընկերը, որովհետեւ նա ոչ մի 'Վանք էի ինչպէս ասանկապաւնաւ պաշտպանութեան դործի լավագոյն կազմակերպման համար. նա իր անձնակազմի օրինակով վարակում է շատ ու շատ բուժ. աշխատողներին:

Բուժ. աշխատող ընկ. ընկ. Ս. Փաշինյանը, Հ. Թադևլոսյանը, Ս. Գրիգորյանը, Շ. Հարությունյանը և շատ ուրիշները ոչ մի ջանք չեն խնայում Կարմիր կաշի աշխատանքների կազմակերպման գործում. նրանց միջոցով Կիրովականի շատ գյուղերում հար- յուրավոր պատվիստներ են պատրաստվել:

Կիրովականի շրջանը ամրացնելով սահնատարական պաշտպանության նվաճումները, մեր երկրին տալով հաղթարավոր պատվիստներ, պայքարում է նորահոր հաղթանակներ ձեռք բերելու համար:

ՍԻՐՈՒՇ ՂԱԶԱՆԵՑՅԱՆ
(Կիրովականի շրջանի Կարմիր Խաչի շրջկոմի
նախագահ)

ᠠᠨᠠᠨᠠᠨᠠ ᠤᠯᠤᠭᠤᠰᠤᠨ

1937 թիվն էր։ Ամառային ամենատաք օրերից մեկը։ Հանդատի օր էր․ կլինե՞ր Երեկոյան ժամի յոթը։ Հայտատանի Կարմիր ինչի՞նչ Կենտկոմի շենքը ինչ ուր արտակարգ եռուղեով մեջ էր։

Կարմիր ինչի Կենտրոնի մի շարք պատասխանատու աշխատողներ աշխուժ կերպով փնտում, զանազան պլաններ էին կազմում, մարշրուտներ մշակում ու անհամբեր սպասում ինչ որ մարդկանց՝ հյուրերի։ Կոլմանիկ մարդն անգամ կնիատեր, որ նրանց տրամադրությունները համակված էր ինչ որ ոգևորությունից։ Հանկարծ հակաօդային պաշտպանություն հնազույն տեսուչ ընկ․ Տերտերյանը, որը մինչ այդ մտահոգ, թաղված խոր մտքերի մեջ, լուսամուտից դուրս էր նայում, վեր թռավ տեղից և ուրախությամբ բացականչեց․

— Ահա, գալիս են...

Ձանցած միջանի բոլի, մեծ ալմուկով ներս
թափվեցին 30-ից—40 հոգի. դրանք Կարմիր խաչի
սանիտարական պաշտպանության աննկուն մարտիկ-
ներէն էին, որոնք Կարմիր խաչի Կենտկոմի հրավերով
եկել էին իրենց սերն ու նվիրվածութիւնը հայանլու
պարտիայի և կառավարութեան առաջադրանքին, որ-
տեպիս արյած էր նրանց կատարելու:


— Ս...ա... Բարև Ձեզ, բարև, սիրելի ընկերներ,— ժպտալով դեմքին դիմալուրեց Կարմիր Ոսպի Կենտրոնի նախագահ ընկ. Մանթաշյանը և մեկ առ մեկ սեղմելով ներս մտնող ընկերների ձեռքը, հրավիրեց նստել:

Փոխադարձ ողջույններից հետո, երբ սովորապես հարցուփորձը վերջացավ ու բոլորը տեղավորվեցին, հնչեց տեղափոխման ժամը և մի պահ լռությամբ հետն առավ Մանթա, լանի ձայնը:

[illegible]

— Ուռու՛... Կեցցե՛, բռնկոյ Կապույտը՝ ար...
գրուպ Կալմուկ։

— Այս արշավով, — շարունակեց Էդ-
յանը, — դուք մի անգամ ևս պետք է ապացուցեք, ո-
րնդուհանդէպ եք պարտիայի և կառավարութեան ինչպէս
ամեն մի առաջադրանք, այնպէս և այս առաջադրան-
քը օրինակելիորեն կատարելու և տալու լավագոյն
ցուցանիշներ: Ձեզանից յուրաքանչյուրը պետք է լա-
զիտակցի, որ Ալազգայի գագաթ բարձրանալը առի-
թ է հանդիսանում ստուգելու երկրի տանիտարակա-
պաշտպանութեան բնագավառում ձեր ձեռք բերած դի-
մելիքները ու դործնականում ամփելի հարատեւանելու



Լեւինալանի Կարմիր Խաչի սանդրութինայի հետիւտն
արշավախումբը Ալազղազի վրայով գնում է Երևան

այն, կոփելով Ձեզ Ֆելիկսպես, որպես պաշտպանու-
կան մարտիկներ: Սանիտարական խառնարկը պետք
է յուրաքանչյուրիդ համար դառնա փառքի ու պատվի
գործ:

— Այո՛, այո՛, պատվի զործ: Ուռուա՛, կեցցե՛
լեւնի՛ն!—Ստալինի մեծ պարտիան, որ զիտե ղաաւիա-
րակել Նման անոյէհեր մարդկանց:

—Երկրի սանիտարական պաշտպանությունը—դա
մեր բոլորի գործն է,—կոչում է մարտիկներինց մի
ուրիշը:

— Փառք կոմունիզմի մեծ նախապրիւս—մեծ
Ստալինին, —յիւրջացնում է մի ալ մարտիկ, որի
նորից ձայն սկսում են մարտիկներն իրենց ուռանե-
լով:

— Ընկերներ, այս առաջադրանքով,—չարունակելի խոսքն ընկ. Մանթաշյանը,—գուր մի անգամ ևս պետք է ապացուցեք, որ իրոք արժանի եք երկրի սանիտարական պաշտպանության մարտիկի բարձր կոչմանը:

Ու նա դեռ չէր վերջացրել իր խոսքը, երբ մարտիկները նորից միաբերան թաղականչեցին։—

— Հանուն մեծ Ստալինի մենք կնվաճենք այս
բարձունքը ևս:

Ընկ. Մանթաշյանի խոսքից հետո սկսվեց
 ելույթները: Մարտիրոսից յուրաքանչյուրը խոսք
 տալիս արշավի ընթացքում լինել օրինակելի, կա
 զասպահ և գերազանցորեն կատարել իր վրա դրվա
 սխարտականությունները: Վերջում ելույթ ունեցա
 նարմիր Խաչի հին ակադիկոստ, սանկտաբական գրո
 ժինայի գերազանցիկ, տնային տնտեսուհի ընկ. Ս
 թիկր:

— Ընկերներ, մասնավորապէս ձեզ եմ ուղղոր-

ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻՆԵՐ ԵՎ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻՆԵՐՈՒ ՄՏԵՔ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ՇԱՐՔԵՐԸ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՑԵՔ ՌԱԶՄԱ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ:

իմ խոսքը, տնային տնտեսուհիներ, — ասաց նա, — ես ձեզանից տարիքով եմ և ծանրաբեռնված եմ ընտանիքով, սակայն, այնուամենայնիվ, մեծ ուրախությամբ պատրաստ եմ կատարելու պարտիայի և կառավարութան ամեն մի առաջադրանքը: Մեր սրտում միշտ վառ պահելով ժողովուրդների մեծ առաջնորդ ընկ. Ստալինի անունը, մենք պատվով կկատարենք մեզ հանձնարարված առաջադրանքը և միացյալ ուժերով կնվաճենք Արագածի բարձունքը:

Ժամի 10-ն էր. բոլորն էլ ցանկանում էին շուտ քնել, առավոտյան շուտ վերկենալ՝ ջոկատից հետ չընկնելու համար:

Նիստը փակվեց: Կարմիր կաշի կենտրոնում մարտիկների համար կազմակերպել էր թեյասեղան:

Միջանի բոլորից հետո մարտիկները նստած թեյասեղանների շուրջը՝ քաղցր գրուցում էին ու ոգևորված էին իրենց վաղվա արշավի հրապույրներով:

* *

Հաջորդ օրը, առավոտյան ծեղին, երբ վաղորդաբան միջնադր հանգիստ ներհում էր Ալազյազի փոշերին, կիսամութի մեջ, Ալազյազի գաղաթը տանող արահետով շարժվում էին ինչ որ մարդկային սերունդներ. դա կարմիր կաշի հերոսական դրոժինան էր, ոտքից մինչև գլուխ հանդերձավորված ալպինիստական հանդերձանքով, տուրիստական դավադանը ձեռքներին, առաջ էր շարժվում. դրոժինան որպես հաղթանակների ու պայքարի դրոշ տանում էր իր հետ մեծ Ստալինի անունը:

Եվ դրոժինան դանդաղ, բայց համառ ու հաստատ քայլերով բարձրանում էր միշտ դեպի վեր, դեպի Ալազյազի գաղաթը:

Դրոժինան պատվով կատարեց իր վրա դրված առաջադրանքը:

Կարմիր կաշի ակտիվիստ՝ Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏՈՒՄ

Կարմիր կաշի կենտրոնին կից ուսումնական կոմբինատը կազմակերպում է պատրաստման և վերապատրաստման դեղով պատվով է արդարացնում իրեն, բարձր լիցքով ու եռանդով հաղթահարելով աշխատանքի պրոցեսում պատահող բոլոր դժվարությունները:

Մինչև 1938 թվից ուսումնական կոմբինատը զուրկ էր ամեն տեսակ հարմարություններից, հետևապես այդ ուղղությամբ իրեն չէր կարող արդարացնել:

1938 թվի սեպտեմբերի 5-ին Կարմիր կաշի կենտրոնի նախագահությունը որոշմամբ կազմակերպվում է ուսումնական կոմբինատ:

Ահա այդ օրից սկսած կարճ ժամանակամիջոցում ուսումնական կոմբինատը միանգամայն փոխում է իր տեսքն ու բովանդակությունը:

Ներկայումս կոմբինատն ունի հարուստ ու կուլտուրական կազմավորում և մեր հայրենիքի պաշտպանության գործում պատվավոր սպասարկում:

Երկու տարվա ընթացքում ուսումնական կոմբինատը հասել է խոշոր նվաճումների, տալով մեր եր-

կրին հարյուրավոր և հազարավոր սանիտարներ, սանհրահանգիչներ, դեղինֆեկտոզներ և քույրեր:

Ներկայումս ուսումնական կոմբինատն ունի հինգ լսարաններ բոլոր հարմարություններով. կոմբինատն օժանդակում է արտադրությունից չկտրված 160 բժիշկների և քույրերի ուսուցման գործին:

Կոմբինատն ունի հարուստ լաբորատորիա իր թերապևտիկ և վիրաբուժական բաժանմունքներով:

Գործում է Կոմբինատի դրադարան-ընթերցարանը, ակումբը՝ իր կուլտուրական սպասարկմամբ, ռադիո-բարձրախոս, անտեննա և այլն:

Գործում են ուսումնական կոմբինատին կից ուսումնական հաստատություններում կազմակերպված բժշկա-քույրական կուրսերը:

Ուսումնական կոմբինատի հերթական խնդիրն է ամրապնդել ձեռք բերած նվաճումները և էլ ավելի մեծ եռանդով լծվել մեր սոցիալիստական հայրենիքի պաշտպանության կազմակերպության սպասարկման գործին:

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԱՎԵՆԻ ԲԱՐՁՐ ԿՊԱՅԵՆԲ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՓՈԽԱՆՑԻԿ ԴՐՈՇ

Լենինականի կարմիր կաշի քաղկոմը, ստանալով ամենօրյա չեկավարություն պարտիական կազմակերպություններից և սերտ կապ պահպանելով կոմսոմոլի հետ ու հենվելով սթանչեկի ակտիվի վրա, ձեռք բերեց զգալի նվաճումներ բոլոր բնագավառներում:

Այժմ Լենինականի իր ձեռքին է պահում ուսուցիչական երեք փոխանցիկ դրոշ՝ դրոժինաների, սանպոստերի և կազմակերպական աշխատանքների:

Մոտ օրերս վերջացավ սանիտարական դրոժինաների՝ Սովետական Հայաստանի քսանամյակին նվիրված մրցակցությունը, որտեղ Լենինականի կազմակերպությունը նորից առաջին տեղը շահեց և փոխանցիկ դրոշը հանձնվեց մեզ:

Ակտիվի կատարած աշխատանքը հիացմունք է պատճառում բոլորին: Ամեն օր աշխատանքի ընթացքում, շատ անգամ աշխատակիցներից շուտ, ներս են գալիս մեր արտաշտատային հրահանգիչ-տնտեսուհիները և առաջադրանքներ ստանալով՝ մեկնում են սկզբնական կազմակերպություններն ու իրենց օգնություններն են կազմակերպում սանպոստերին, սանդրուժինաներին: Ինչպես չհրճվել ակտիվի կատարած աշխատանքով:

Ահա տարանին կից № 12 սանպոստը, որը գործում է 1935 թվից. իր միջոցներով ձեռք է բերել լրիվ հաղեցում և դրանց պահպանման համար հարմար չենք:

Բացի բուժական տուփին օգնությունից, կազմակերպել են սանարշավ, գործնական աշխատանքների համար, շախմատ են հիմնադրում օրական 2 ժամ, օգնել են ռադիոյին բժշկին: 1940 թ. ամբողջ շնորհիվ սանպոստի պետ Մկրտչյան Մարգարիտի:

Դրանցից ոչնչով հետ չի մնում ժակտային № 41 Դրանցից ոչնչով հետ չի մնում ժակտային № 41 սանպոստը, որի պետն է Սովետական Հայաստանի անհատական կազմակերպության վարչության Լուսիկ, դամներ՝ իրավաբան Վարսիկ, ֆարմազյան Լուսիկ, Լաչիկյան Հովհաննիսյան, բոլորն էլ տնտեսուհիներ. սրանք հնգօրյակում մեկ անգամ անց են կացնում պարապմունքներ, կապված են իրենց սկզբնական կազմակերպության հետ, կատարում են նրա առաջադրանքները:

1940 թ. ցույց են ավել 23 բուժօգնություն, բաժանական ծանր պայմաններում, օգնել են առողջապահական օրգաններին, նրանց կողմից անցկացնող միջոցառումներին:

Սանպոստի առաջադրանքով կատարվել է թաղի բոլոր փողոցների, բակերի մաքրում և աղբահանում: Օղակային տաղանավի ժամանակ լրիվ կերպով կազմ ու պատրաստ կատարվել են բուժօգնություն պետի կարգադրությունները:

Մեր դրոժինիկների էնտուզիազմը, անձնվիրությունը հիացմունք է պատճառում մեր աշխատավոր թիունը հիացմունք է պատճառում աշխատանքների որսմասսաներին: Նրանց կատարած աշխատանքների որսմասսաներին:



Լենինականի սանիտարիայի հետիտուն արշավը Ալազյազի վրայով երևան

կը, դրա հետ զուգընթաց արագաշարժությունը պետք է օրինակ ծառայի մյուս բոլոր դրոժինաներին:

Արժանի է հիշատակման 40 հոգուց բաղկացած Սանդրուժինայի հետիտուն արշավը, նվիրված Գերազույն Սովետի ընտրություններին: Լենինականից Արագածի վրայով դեպի Նրևան 400 կիլոմետրից ավելի ճանապարհը սրանք անցել են 4 օրում:

Կարելի է բերել նման փայլուն շատ օրինակներ: Սովետական Հայաստանի 20-ամյակին նվիրված աստղաձև հետիտուն արշավին մասնակցելու է նաև Լենինականը, որը պետք է բավական երկար, դժվարին ճանապարհ կտրի:

Այժմ, ինչպես և միշտ, մեր դրոժինիկները՝ ոգեշնչված հանճարեղ առաջնորդ ընկ. Ստալինի անունով, պատրաստ են կատարելու էլ ավելի դժվարին առաջադրանքներ և վստահորեն հայտարարում են, որ Լենինականը երբեք ոչոքին չի զիջի փոխանցիկ դրոշներից և ոչ մեկը:

Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

(Լենինականի կարմիր կաշի քաղկոմի նախագահ)

ԴՈՒ ՊԱՏՐԱՍԵՍ ԵՍ ՄԵՐ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԳՈՐԾԻՆ.
ԴՈՒ ՀԱՆՁՆԵՂ ԵՍ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՊՍՊ-Ի ԵՎ ԵՊՍՊ-Ի ՆՈՐՄԱՆԵՐԸ. ԵԹԵ ԶԵՍ ՀԱՆՁՆԵԼ — ՇՏԱՊԻՐ:

ՍԱՆՊՈՍՏԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ

Երևան քաղաքում հայտարարված է սպանության դրուժություն: Կարմիր խաչի սանձակապետները, սան-պոստերն ու սանիտարական դրուժիկները շարունա-կում են իրենց սովորական աշխատանքները: Որը կանգնած է դադարի մոտ, որը կարի մեքենայի, որը դրադված է տան մեջ իր երեխաների խմանքով ու սպասում են ազդանշանին: Լավեց երկարատև սուրբ-«օղախի տաղնապ» բացականչում են մեկը մյուսի հե-տևից սանպոստերի ու դրուժիկների հրամանատար-ները, շտապ կերպով հակադրվելով ուսերին դրած վագում են դեպի իրենց շտաբը: Չանցած միջանի բո-պե, սանպոստերն իրենց հագեցումներով պատրաստ վիճակի են բերվել:

Լավեց հեռախոսի զանգը, «Ձեզ հետ խոսում է Սպանդարյան ռադիոյի № 13 սանպոստի պետ Հակոբ-յան Վերդուլը: Օղակս ժամանակին լրիվ հավաքվեց, ունեցանք 11 դժբախտ դեպք, որոնցից երկուսը ծանր: Պատրաստ ենք և սպասում ենք նոր կարգադրու-թյան»:

Կարապետյան Արաբիյի և Ասատրյան Լյուսյան ար-յունահոսություն էին կանգնեցնում, երբ Մեղրոյան Մանյան հանկարծ հետ նայեց և տեսավ ուշաթափ ընկած մի ծեր մարդ: Ժամանակ ժամանակ չկար, Հակո-բյան Վերդուլի սանպոստից շտապ հանեց նախա-րի սպիտակ և մոտեցրեց քթանցքին: Ծերունիը չի շարժվում, «այս դեպք չի օգնում», հարկավոր է մի ուրիշ միջոցառում», մտածում է ինքնիրեն Մանյան և սկսում է արհեստական շնչառության գործողություն: Շնագած Մանյանի ձեռքերն արդեն հոգնել են, բայց նա չի դադարում, դեռ էլի մի ժամ պետք է շարունա-կել գործողությունը: Մանյանի ուրախությունը չափ չկար, ուշաթափը շարժվեց և անգամ ժպտաց:

Տաղնապի երկրորդ օրն է: Նորից հեռախոսի ձայն լսվեց. «Պոստում է Մոլոտովյան ռադիոյի 5-րդ դրուժիկադամի սանպոստի պետ Փիլոյան Նունյան»:

մեզ մոտ հերթապահությունը շարունակվում է. մեր թաղի բոլոր տները մեկամեկ ստուգված են, մեր ռադիոյի լուսաբերական լրիվ է. օղախի տաղնապի ժամանակ մեզ մոտ 25 դժբախտ դեպք եղավ և բո-լորին ցույց տրվեց առաջին օգնություն, տաղնապի ժամանակ շտաբի կողմից մեր կատարած աշխատանք-ները համար ստացանք շնորհակալություն, ինձանից պահանջեցին իմ օղակի անդամների ազդանշանները... ու Փիլոյանի ձայնը կտրվեց, հեռախոսը միացրին մի ուրիշի հետ:

«Կիրովյան ռադիոյի Նալբանդյան փողոց № 87 սանպոստի պետ Սպանդարյան Լյուսյան է խոսում. մի՞թե մոռացել եք իմ օղակը, որը Համախոսության ժամանակ Մոլոտովյան 3-րդ հեղափոխության սանպոստերի մրցում-ներին ժամանակ ռադիոյում առաջին տեղը գրավեց. ուրեմն հիշեցի՞ք, ես ուզում եմ հայտնել, որ տաղնա-պի ընթացքում ժակտային 9 տներում ցույց ենք տվել առաջին օգնություն. դեպքերը տարբեր էին՝ կային հրդեհից վնասվածներ, ոսկրի ջարդվածքներ, ձկան կոնսերվից թունավորվածներ և մեկին մինչև իսկ էլեկտրական հոսանքն էր խփել: Մենք մեզ չկորցրինք, վերհիշեցինք ՊՍՊ-ի խմբակներում ստացած մեր դի-տելիքները և այդ օրը բոլորս բավականությունը հի-շում էինք, որ շատերի կյանքը փրկեցինք»:

Սրանով չի սահմանափակվում սանիտարական պոստերի աշխատանքը. նա բազմակողմանի է և չա-փազանց կարևոր: Եթե դժբախտ դեպքում օգնող չու-նեք, դիմեցեք ձեր մոտակա սանպոստերին և կանչել տվեք շուտափույթ օգնության կայանից, նրանց մի-ջոցով առողջացրեք ձեր շրջակայքը և միշտ հիշեցեք նրանց հասցեն—համարակալված տախտակ Կարմիր խաչի նշանով, դուան մոտ կախված սպիտակ դրոշակ, Կարմիր խաչը մեջտեղից:


Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՍԱՆՊՈՍՏԸ—ԿԻՐՈՎԱԿԱՆԻ ԹՐՋԱՆԻ ՊԱՐԾԱՆՔ

Առաջափորձների շարքերը դրավելու նպատակով կոլտոգային սանպոստը իր աշխատանքը սկսեց հիմ-քից: Հանձնել են ՊՍՊ-ի թե՛ առաջին, թե՛ երկրորդ աստիճանի նորմաները. այնուհետև ձեռք բերած գի-տելիքներս ամրապնդեցինք գործնականում: Տակտի-կական ուսուցում ենք ունեցել 23 անգամ. 7 անգամ մասնակցել ենք մասսայական ուսուցումներին: Մեր սանպոստը աշխատեց նաև գորահաժարակայանում, կազմակերպելով Կարմիր խաչի անկյուն, անց են կացված դրույցներ, 25 դժբախտ դեպքի ժամանակ ցույց է տրված օգնություն, սահմանված է հերթա-

պահություն, պահում են հատուկ օրագիր, որի մեջ գրանցում են կատարած աշխատանքը: Սանպոստը մասնակցեց ստալինյան երրորդ հըն-գամյակի մրցումներին և ռեսպուբլիկայի մեջ դրավեց երկրորդ տեղը. ամբողջ կազմը պարգևատրված է թանկարժեք նվերներով, անցել եմ վերապատրաս-տում: Սրանք վաղվա նոր հաջողությունների երաշ-խիք են: Սանպոստը իր աշխատանքներում պետք է նոր թափ ու եռանդ ստեղծի եղած թերությունները կարճ ժամանակում լիկվիդացիայի ենթարկելու հա-մար:

ԱՄԻՐԱԲԵԿՅԱՆ ՆԻՆԱ



Ագարակի սանպոստը տակտիկական պարապմունքի ժամին

ԾԱՅՈՒՄՅԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

1938 թ. չնայած անվանապես գոյություն է ունե-ցել Կարմիր խաչի սկզբնական կազմակերպությունը, բայց իմ ընտրության ժամանակ ոչ մի գործ չի հան-բերված, քանի որ ոչ մի աշխատանք չի տարվել այդ ուղղությամբ: Ես ընտրվել եմ 1939 թ. հունվար ամսին. այդ օրվանից սկսել եմ աշխատել, և այժմ կազմակերպու-թյունն ունի հետևյալ պատկերը:

1939 թվին եղել է. Կարմիր խաչի անդամներ 425 հոգի. դանձված անդամավճարներ 780 ռուբլի կազմակերպված սանպոստեր 6 ՊՍՊ-ի առաջին աստիճ. խմբակներում 102 հոգի ԵՊՍՊ-ի խմբակներում 209 հոգի 1940 թվին՝ Կարմիր խաչի անդամներ 680 հոգի դանձված անդամավճարներ 680 ռ. սանպոստեր 13 օղակ ՊՍՊ-խմբակ առաջին աստիճանի 224 հոգի ԵՊՍՊ-խմբակ 331 հոգի ՊՍՊ-ի 224 հոգուց 47 հոգին կազմում են լեկտո-

րական կազմը:

Մասսայական ազդեցություն աշխատանք է կատար-ված պիոներական հավաքությունների ժամանակ, Կար-միր խաչի հատուկ ակտիվի միջոցով, դասարաննե-րում՝ բժշկի և կոմիտեի անդամների միջոցով. բա-ցատրված են Կարմիր խաչի խնդիրներն ու նրա նշա-նակությունը: Ծնորհիվ այս ակտիվ աշխատանքի դպրոցի կոլեկտիվը կոչ ընդունեց, որը նպաստեց Հա-յաստանի դպրոցների կողմից պլանները կատարելուն և դերակատարելուն:

Բոլոր գինակոչիկները հանձնեցին ՊՍՊ-ի առաջին աստիճանի նորմաները: Այս աշխատանքում մեծ օգ-նություն ու օժանդակություն են ցույց տվել՝ Աղաս-յան Նիկոլայը—դպրոցի գերեկտոր, Առաքելյան Մա-թեմիոսը—պարտկոմի քարտուղար, Սարգսյան Ռո-դան—կոմիտեի անդամ, Նալբանդյան Մարգարիտը—կուկանյան Օլգան—աշակերտ, Ջալյան Սիրուշը—դա-սառու, Սարգսյան Կարլենը—աշակերտ և Սվազյան Գրիգորը—պարտկոմի քարտուղար:

Շահումյանի անվան դպրոցը խոստանում է է՛լ ավելի մեծ նվաճումներով հավերժացնել Հայաստանի սովետականացման քսանամյակը:


Ա. ՎԱՐՏԻԿՅԱՆ

ԶԱԶՈՒՌԻ Կ. ԽԱԶԻ ՍԱՆՊՈՍՏԸ

Փորձի փոխանակման կարգով նամակ գրեցի Կիրովականի շրջանի Զորագյուղի սանպոստի պետին և երբ պատասխան ստացա ու ծանոթացա գործի դժբախտության, ես ևս Դուգլենդի շրջանի Զաջուռ գյուղում սանպոստ կազմակերպեցի և Սովետական Հայաստանի 20-ամյակը ամբողջ օղակով դիմավորում ենք զգալի նվաճումներով: Ամենից առաջ բոլորս ընդգրկվեցինք ՊՍՊ-ի խմբակում և հանձնեցինք նորմաները, մեր ձեռք բերած գիտելիքներն ամրապնդում ենք գործնական և տակտիկական ուսուցման միջոցով: Իմ օղակայիններս ամբողջով են դաշտային բրիգադներին առաջին օգնություն ցույց տալու համար, նրանք կըցված են նաև տարբեր օբյեկտներին՝ դպրոցներին, մսուրներին և հսկում են նրանց սանիտարական գրու-թյանը:

Երկու անգամ շաբաթօրյակ կազմակերպեցինք, 25 դժբախտ պատահարների ժամանակ ցույց է տրված բուժօգնություն, ինչպես նաև կազմակերպված է հիվանդներին խնամք: Զմեռ ժամանակ կազմակերպեցինք հետիոտն արշավ դեպի Զաջուռի սարը:

Իմ սանպոստը ակտիվ մասնակցություն ունեցավ սանպոստների մրցումներին և չահեց աչքի ընկնող տեղերից մեկը՝ Հնայած որ մրցում էինք մայրաքաղաքի



Զաջուռի սանպոստը բուժօգնություն ցույց տալիս

սանպոստների հետ: Կարմիր խաչի Կենտրոնի կողմից պարգևատրվեցինք:

Ես աշխատում եմ նաև իմ մասնագիտական մա-կարդակը բարձրացնել, որի համար անցել եմ սան-պոստների պետերի վերապատրաստման կուրսերը:

Ահա իմ օղակի համեստ աշխատանքի արդյունքը:

ՍԱՐԳՍՅԱՆ ԵՐԱՆՅԱԿ

ՍԱՆՊՈՒԹԻՆԱՆԵՐԻ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ՄՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հանձնաժողովը՝ նախագահությամբ Կարմիր խաչի Կենտրոնի նախագահ ընկ. Ս. Զատիկյանի, Ս. Տերտե-րյանի, Ա. Խաչատրյանի, Ա. Անտոնյանի, ԼԿԵՄ Կենտրոնից ընկ. Տոնապետյանի և Պաշտպանության Կենտրոնից ընկ. Չիթճյանի Արտավազդի նոյեմբերի 9-ին անցկացրին Հայաստանում սովետական կարգերի հաստատման 20-ամյակին նվիրված սանպոստներին ուսուցողական մրցակցությունը:

Մրցման ներկայացավ Լենինականի լրիվ մի դրու-թիւն

Մոլոտովյան ուսուցից 5 օղակ

Կիրովյան ուսուցից 4 օղակ

Կիրովականից 3 օղակ՝ ըստ ժյուրիի որոշման:

Մրցման արդյունքները՝ 1-ին տեղը բռնեց Լենինականը, 2-րդ տեղը՝ Երևանի Մոլոտովյան ուսուցիչ, 3-րդ տեղը՝ Կիրովականը, 4-րդ տեղը՝ Երևանի Կիրովյան ուսուցիչ:

Հանձնաժողովը նշում է, որ Լենինականը աչքի էր ընկնում իր կազմակերպվածությամբ ու կարգա-պահությամբ:

Նույն վիճակում էր նաև Կիրովականը:

Մոլոտովյան ուսուցիչը աչքի ընկավ նրանով, որ լավագույն կերպով ապահովել էր տնային տնտեսու-հիներեց կազմակերպված դրուժինան:

Իր անկազմակերպվածությամբ աչքի ընկավ Կիրովյան ուսուցիչը, որը մրցման ներկայացրեց անվարժ դրուժինիկներ:

Բոլոր դրուժինաների կողմից վատ էր մշակված առաջին վարժությունը:

Երկրորդ վարժությունը՝ հանձնաժողովը որոշեց.

1. Փոխանցիկ դրոշմ թողնել Լենինականին. իսկ լավագույն դրուժինիկներին պարգևատրելու համար Լենինականի տրամադրությամբ տակ դրել 600 ուրբլի:

2. Մոլոտովյան ուսուցիչն տալ ընկ. Ստալինի կի-սանդերին և 300 ուրբլի:

3. Կիրովականի շրջանին տալ ընկ. Վորոշիլովի կիսանդրին և 250 ուրբլի:

Հանձնաժողովը հանձնարարեց ընկ. ընկ. Անտո-նյանին, Հակոբյանին և Ղազարյանին, որպեսզի լավագույն դրուժինականներին և քաղցիկներին առա-ջադրեն Կենտրոնի նախագահությանը՝ խրախուսանքի արժանացնելու համար:

Հարց—Ինչպես կազմակերպել սկզբնական կազ-մակերպությունը, եթե տվյալ հիմնարկում ոչ ոք Կարմիր խաչի անդամ չէ (Պետրոսյան):

Պատասխան—Սկզբնական կազմակերպության ձե-վակերպումը պետք է լինի տվյալ հիմնարկու-թյան, ձևանախոսության, կոլեկտիվի, աշխատողի մեջ, 7 հոգուց ոչ պակաս աշխատողի լինելու դեպ-քում, եթե նրանք ցանկություն են հայտնում դասնա-լից, Կարմիր խաչի անդամներ, նրանք տալիս են դիմում, ինչպես բնութագրել է, անհատական կարգով Կարմիր խաչի շրջանային կոմիտեն, որը քննում և ընդո-րում է, անց է կացնում կազմակերպական ժողով և ստեղծում է սկզբնական կազմակերպություն:

Հարց—Ինչ որոշման հիման վրա է, որ սանիտա-րական պրոպագանդա է հաղեցվել տվյալ հիմնար-կություն, ձևանախոսության, կոլեկտիվի և սովորու-թյան (Ավետիսյան):

Պատասխան—ՍՍՍՄ ԿԳԿ-ի նախագահության 1937 թվի հոկտեմբերի 22-ի նիստի որոշման համաձայն վարչերում, որտեղ կազմակերպվել են սանիտա-րական պրոպագանդա, նրանք հաղեցվում են տվյալ հիմ-նարկության, ձևանախոսության, կոլեկտիվի, սովորու-թյան հաշվին:

Հարց—Երբ է կազմակերպվել Հայաստանում Կարմիր խաչի ընկերությունը (Խաչատրյան):

Պատասխան—Հայաստանում Կարմիր խաչի ընկե-րությունը կազմակերպվել է 1920 թ. մայիս ամսին:

Հարց—Ինչու Կարմիր խաչը համարվում է մի-ջազգային կազմակերպություն (Ավագյան):

Պատասխան—Համաձայն ժնեյի 1864 թ. կոնվեն-ցիայի, Կարմիր խաչը և Կարմիր Կիսալուսինը հա-մարվում են միջազգային ընկերություն և հաշվվում է Միջազգային լիգայի անդամ:

Հարց—Ինչի հիման վրա կամ ո՞ւմ որոշմամբ թիշկները պետք է տարեկան 72 ժամ հասարակա-կարգով պրոպագանդա Կարմիր խաչի գծով կազմակեր-պված «ՊՍՊ»-ի խմբակներում (Գրիգորյան):

Պատասխան—ՍՍՍՄ Առողջկոմատի 1938 թվի հունվարի որոշմամբ ՍՍՍՄ-ի բոլոր վարչերում ամե-սի թիշկ և թիշկական պրոպագանդա տարեկան 72 ժամ հասարակական կարգով պետք է պրոպագանդա Կարմիր խաչի գծով կազմակերպված ՊՍՊ-ի խմբակներում: Եթե առթիվ բոլոր շրջադասիները և Կարմիր խաչի աշխատողները և նաև Հայկական ՍՍՍՄ-ի Առ-ողջկոմատի և Կարմիր խաչի Կենտրոնի հատուկ հրա-հանդեր:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ!

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ-Ի ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԿԵՆՏՐՈՆԸ ԳՏՆՎՈՒՄԷ ԵՐԵՎԱՆՈՒՄ, ՍՎԵՐԴՆՈՎԻ ՓՈՂ. № 107 ՇԵՆՔՈՒՄ, ՀԵՌ. № № 24-88, 24-87, 24-26: ԶԵՋ ՀԵՏԱՔՐՔՐՈՂ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ՀԱՐՑՈՎ ԴԻՄԵՔ, ԴՈՒՔ ԿՍՏԱՆԱՔ ԶԵՐ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏԱՍԻԱՆԸ: 2013



Պատվ. № 335, տիրաժ 1000, Հաճ. № 335, տիր. 1000

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան, Երևան, Ալեհիզդյան № 65
Типография Гос. изд. полит. литературы, Ереван, Аллахвердян № 65

10

9

САНИТАРАКАН ПАШТПАНУТЮН
(Санитарная оборона)

Издание ЦК Красного Креста Арм. ССР

